

# ՄԱՐԶԻԿ

հսկս

# Մարզիկ

مَجَلَّة رِيَاضِيَّة شَهْرِيَّة  
تصدرها جمعية الهومنتمن ببيروت

# marzig

SPORTS MAGAZINE

հի. ՏԱՐԻ, 2010, թիի 9 (339) - VOL. XXIX N° 9 السنة التاسعة والعشرون - العدد التاسع



Հ.Մ.Ղ.Մ. ՊԱՂՏԱՏ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ 28-ՐԴ  
ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍ



مازنيغ  
مجله رياضية  
تصدرها جمعية الهوسطن  
Sports Magazine

# ԲՈԼՈՐ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ



Designed by: Y. Concept

## «ՄԱՐԶԻԿ»Ի 12 ԹԻԻԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ





# ԹԻԼԻՆ ՆԻԼԹ ԵՐՂ


**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 سارزليگ مجلة رياضية شهرية تصدرها جمعية المونتيم الرياضي



3

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հարցազրույց 3
- Տպաւորութիւն 11
- Պատմութիւն 14
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 18




33



18

## ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 16
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻԹ. ՏԱՐԻ, 2010, ԹԻՒ 9 (339)

ԽՄԲԱԳԻՐ  
 ԿԻՉԵՆ ԱՆՁԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Աթո Մոսիկեան  
 Գօգօ Սկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Շահինեան  
 Սալթի Ճէճէեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Ներսէս Արք. Բախտիկեան\*,  
 Գ. Թորոյեան, Բաֆֆի Սիւլահեան,  
 Մարո Քէշիշեան, Շադիկ Գէորգեան  
 եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Զեւատրում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրճ Համուտ, Ճիմիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ձղուած է 35000 լ.ն.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):





# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆ ԱՅՈՒՄԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

(Ե.)

**Օ** այրագոյն Արեւելքէն մինչեւ Ասիա եւ Եւրոպայէն մինչեւ Ամերիկաներ, այսօր, ականատես կ'ըլլանք միատեսակ, միագոյն, միօրինակ երիտասարդութեան մը ստեղծման: Քոքա-քոլայի սերունդն է այդ, որ յաճախ կարելի չէ զանազանել երկիրէ երկիր իր հագածքով, նիստ ու կացով, խոհանոցով, մշակոյթով եւ մտայնութեամբ:

Առանձնութեամբ վարակուած սերունդն է ան, որ իրեն համար ստեղծած է նոր կրօնք մը՝ *մեքենապաշտութիւնը*: Ան գերին է համակարգիչին, բջիջային հեռաձայնին, պատկերասփիւռին եւ Էլեկտրոնիկ խաղերուն: Իր անձնական կեանքը չի կրնար պատկերացնել առանց անոնց եւ, հետեւաբար, իր անհատական, ընկերային թէ ազգային նկարագիրով տարբեր է ան իր նախորդներէն:

Այդ սերունդը տարբեր է նաեւ իր հոգերով, որովհետեւ ամէնէն ասելի ան իր մորթին վրայ կը զգայ համաշխարհայնացումի ժխտական հետեւանքները՝ առողջապահական եւ կենսոլորտային հետզհետէ ահագնացող վտանգները, որոնց դիմաց գրեթէ անզօր կը մնայ:

Այս բոլորէն ետք, պէտք է հանել նաեւ յոռետեսութեան ակնոցը եւ խմբագրականներու այս շարքին աւարտը ներկայացնել իրատեսութեան ակնոցով: Անգամ մը եւս ըսելու համար, որ ինչ ալ ըլլան մեր շուրջի պայմանները, կեանքը պիտի շարու-

նակուի եւ քաղաքակրթութիւնը պիտի զարգանայ իրեն յատուկ կշռոյթով: Համաշխարհայնացումը այսօր այդ կշռոյթը ճշդող հզօր շարժումն է, որուն դիմաց կարելի չէ պատնէշ բարձրացնել կամ ճակատ յարդարել: Համաշխարհայնացումը յստակ մարտահրաւեր է իւրաքանչիւր ժողովուրդի՝ իր ինքնութիւնը, դիմագիծը եւ արժէքները շեշտելու: Իսկ ամէնէն ասելի ո՞վ կոչուած է այդ առաքելութեան՝ եթէ ոչ երիտասարդութիւնը:

Այլասերումը կը սկսի երիտասարդութենէն: Պատմական իրագործումներու խոյանքը եւս ծայր կու տայ երիտասարդութենէն, որ յաւիտենական պայքարող ուժն է՝ ի խնդիր ճշմարիտին, գեղեցիկին եւ բարիին, որովհետեւ բնախօսական իր կազմը-լածքով երիտասարդներ ուրիշներէն ասելի անշահախնդիր, անձնուէր եւ իտէալապաշտ են:

Պէտք է վստահիլ երիտասարդներու, որովհետեւ անոնք բոլորէն ասելի ձկուն են, խիզախ ու պատրաստակամ, իրենք զիրենք պատշաճեցնելու համար նոր ստեղծուած պայմաններուն եւ միջավայրին: Ու պէտք է մղել զանոնք՝ համաշխարհայնացումէն առնելու այն ինչ որ դրական է ու օգտակար, եւ մերժելու այն ինչ որ ժրխտական է ու անընդունելի:

Պէտք է վստահիլ եւ պէտք է գուրգուրալ երիտասարդութեան, որովհետեւ համաշխարհայնացած այս աշխարհին մէջ, մանուկ, պատանի թէ երիտասարդ այլեւս մեզի պէտք չունին, մե՛նք է որ իրենց պէտք ունինք:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՐԺԵԻՈՐՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ՝

ՄԵՆՔ ԱՅՍՕՐ ՍԵՐՄԵՐԸ ԿԸ ՑՃԱՆԵՆՔ, ՈՐՊԷՍՁԻ ՏԱՐԻՆԵՐ ԵՏՔ ԱՆՈՆՑ ՊՏՈՒՂՆԵՐԸ ՔԱՂԵՆՔ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ՔԷՇԻՇԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի «Հայր Պողոս Արիս» խոտածածկ դաշտի բացման նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան քարոզչական յանձնախումբը հարցազրոյց մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանի հետ:

Հարցազրոյցին առանցքը հանդիսացաւ ընդհանրապէս շրջանին գործունէութիւնը եւ յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ֆութպոլի խումբերուն վերակազմաւորումը, որ տեղի կ'ունենայ ֆութպոլի նորաստեղծ դպրոցի աշխատանքներուն ընդմէջէն:

**Ե**ղբ. Քէշիշեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի 40րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը իր երկամեայ գործունէութեան ծրագիրին մէջ կեդրոնացաւ կազմակերպչական, քարոզչական եւ դաստիարակչական աշխատանքներու աշխուժացման ջանքերուն վրայ:

Շրջանային Վարչութիւնը իր մշակած ծրագիրը յաջողցնելու համար յառաջացուց յանձնախումբեր, որոնց ընդմէջէն արդէն տարի մըն է, որ կարգ մը աշխատանքներ կատարուած են:

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կատարած աշխատանքներուն ընդհանուր պատկերին մասին խօսելով, եղբ. Քէշիշեան յայտնեց, որ վարչութիւնը վերակազմեց Հ.Մ.Ը.Մ.Ի Ճիւնիի եւ Զահլէի մասնաճիւղերը, որոնք շրջանէ մը ի վեր կազմալոյժ էին:

Զահլէի պարագային ընտրուեցաւ վարչութիւն մը, որ իսկոյն ձեռնարկեց սկստական աշխատանքներու: «Վերջերս, Հ.Մ.Ը.Մ.Ի Զահլէի ակումբին մէջ տեղի ունեցաւ երկօրեայ



Սայիսեան փառատօն 2010:

սեմինար-բանակում մը, իսկ անցեալ Օգոստոսին մասնաճիւղը իր սկստական երոյժ մասնակցեցաւ Այնճարի մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահին ի պատիւ կազմակերպուած պաշտօնական ընդունելութեան», ըսաւ ան:

Ճիւնիի պարագային, մասնաճիւղը չորս-հինգ տարի է ի վեր կը գտնուէր ոչ գործօն վիճակի մէջ: Շրջանցելու համար այդ հանգրուանը, մասնաճիւղը ունեցաւ նշանակովի վար-





չուլթիւն մը, որ սկսաւ վերակազմակերպուիլ:

Մասնաճիւղը արդէն իսկ ունեցաւ իր սկաուտական խումբակը, որ ամբան կատարեց իր բանակումը: Վարչութիւնը նաեւ ձիւնիի ակումբին բարեգարդումը իրականացուց եւ կը նախատեսուի, որ մօտիկ ապագային բացումը կատարուի վերակառուցուած ու բարեգարդուած ակումբին:

Մօտ օրէն տեղի պիտի ունենայ նաեւ մասնաճիւղին ընդհանուր ժողովը, ընտրելու համար մասնաճիւղին վարչութիւնը:

Եղբ․ Քէշիշեան յայտնեց, որ կազմակերպական առումով Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ձեռնարկած է անդամաքարտերու աշխատանքի մը, որուն միջոցով իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական պիտի ունենայ իր անձնական տեղեկութիւններուն յատկացուած հարցաթերթիկը, որ պիտի օգնէ իմանալու եղած մարդու թիւն տարողութիւնը եւ գիտնալու, թէ իւրաքանչիւր անդամ ի՞նչ ցեղք ունի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

«Դաստիարակչական բաժնի պարագային, Հ.Մ.Ը.Մ.ի

Շրջանային Վարչութեան կազմակերպչական յանձնախումբը երեք կամ չորս առիթով մարզիկներու դաստիարակչական աշխատանքին նախաձեռնեց: Կազմակերպուեցան եւ գործադրուեցան դաստիարակչական հանդիպումներ, որոնց ներկայ գտնուեցան Շրջանային Վարչութեան հովանաւորութիւնը վայելող ներկայացուցչական խումբերու մարզիկներ: Դաստիարակչական ծրագիրը ունի նաեւ երկրորդ հանգրուան մը, որ գործադրութեան պիտի դրուի, երբ տարբեր շրջաններու մէջ նոր վարչութիւններ ընտրուին», ըսաւ ան:

Եղբ․ Քէշիշեան նկատել տուաւ, որ այդ մարզիկները կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ի կիրարկած բոլոր մարզաձեւերը: Ան նշեց, որ Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչման նախօրեակին, Պիքֆայայի Ապրիլեան Եղեռնի յուշարձանին ծաղկեպսակ զետեղելու սկաուտական աւանդութեան կողքին, առաջին անգամ ըլլալով, այս տարի յարգանքի տուրք մատուցեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները, որոնց մասնակցութիւնը այսուհետեւ պիտի դառնայ աւանդութիւն:

Կազմակերպչական աշխատանքներու ծիրին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի համար աւանդական դարձած այլ ձեռնարկ մըն է Հ.Մ.Ը.Մ.ի նահատակներու յիշատակին տեղի ունեցող հոգեհանգստեան տարեկան արարողութիւնը, որ կը կատարուի Նոյեմբեր ամսուան ընթացքին:

«Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ունեցաւ նաեւ քարոզչական աշխատանք, որուն ծիրին մէջ, Պէյրութի «Ազգակ» օրաթերթին էջերէն երկշաբաթեայ դրութեամբ ներկայացուց իր սկաուտական եւ մարզական աշխատանքները, պատմութիւնն ու ներկայ իրավիճակը: Այս աշխատանքը գաղութին մէջ

մեծ արձագանգ ու տպաւորութիւն ձգեց: Յառաջիկայի ծրագիրը պիտի ըլլայ մեզի յատկացուած էջով հրապարակել Հ.Մ.Ը.Մ.ի տարբեր մասնաճիւղերու աշխատանքներուն մասին տեղեկութիւններ», ըսաւ ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ լիբանանեան մարզական թէ սկաուտական բոլոր ակումբներուն միջեւ յարաբերութիւնները բաւական լաւ վիճակի մէջ են: «Լիբանանի տարբեր շրջաններու քաղաքապետութիւններուն, մարզական ակումբներուն եւ երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարարին հետ մեր յարաբերութիւնները հեզասահ ընթացքի մէջ են եւ այդ ընթացքը կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն», ըսաւ եղբ․ Քէշիշեան:

Ան նշեց, որ մարզական կեանքին մէջ ներկայիս լաւագոյն արդիւնք արձանագրող մարզախաղերէն մէկը փինկ-փոնկն է: «Փինկ-փոնկի պարագային, միջ-արաբական խոյնեան ակումբներու աղջկանց խոյնեանութեան մրցաշարքին, Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի աղջկանց խումբը, որ Լիբանանի



ախոյեանն է, տիրացաւ երրորդ դիրքին եւ արժանացաւ պրոնոզէ մետալի: Այս առիթով կ'ուզեմ ըսել, որ Հ.Մ.Ը.Մ.Պ-ի մարզիկ Աւօ Մուսօղոյեան 18 տարեկանէն վար փինկ-փոնկի Լիբանանի ախոյեանն է: Ան այս մրցաշարքին փոխ տրուեցաւ Քֆարչիմայի Ռիատա Ուալ Ատապ խումբին եւ մրցաշարքի աւարտին ընտրուեցաւ մրցաշարքի տիպար մարզիկ:

Եղբ. Քէշիշեան յայտնեց, որ ճատրակի պարագային եւս Հ.Մ.Ը.Մ. իր մասնակցութիւնը բերած է Լիբանանի մէջ տեղի ունեցող խմբային ախոյեանութեան: Այս առիթով խումբին միացած է Հայաստանէն ժամանած ճատրակի մեծ վարպետ Տիգրան Գոթմանճեան, որուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. հանդիսացած է երրորդ:

Աթլետիզմին ակնարկելով, Յ. Քէշիշեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. այդ մարզաձեւին իր սիրողական մասնակցութիւնը կը բերէ, որովհետեւ խումբերը հաւաքելու եւ անոնց մարզումի վայր յատկացնելու իմաստով լուրջ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուի:

Պասքետպոլին մասին խօսելով, Շրջանային Վարչութեան ատենապետը յայտնեց, որ այդ մարզաձեւը լաւ ընթացքի մէջ է: «Տղոց պարագային, Հ.Մ.Ը.Մ. ի ներկայացուցչական խումբը կը գտնուի երկրորդ դասակարգի մէջ: Նաեւ ունինք Հ.Մ.Ը.Մ. ի ձիւնիի եւ ԼԵՎԱՄ-ի խումբերը, որոնք ցարդ Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութեան տակ են: Հ.Մ.Ը.Մ. ի ձիւնիի եւ ԼԵՎԱՄ-ի խումբերը լաւ արդիւնքներ կ'արձանագրեն: Աղջկանց պարագային, Հ.Մ.Ը.Մ. ի 40-րդ Ներկայացուցչական Շրջանային Ժողովը որոշեց իւրաքանչիւր մարզաձեւի պարագային բարձրագոյն դասակարգի մէջ ունենալ ներկայացուցչական միայն մէկ խումբ եւ Հ.Մ.Ը.Մ. ի ներկայ Շրջանային Վարչութիւնը այդ որոշումը պիտի գործադրէ: Հետեւաբար, աղջկանց պարագային ներկայացուցչական մէկ խումբ պիտի ունենանք՝ բոլոր խումբերէն լաւագոյն տարրերը ընտրելով», ըսաւ ան:

Շրջանային Վարչութիւնը այս տարի առաջին անգամ ըլլալով կազմակերպեց հեծելաբաշարի մրցում մը, Շուշիի ազա-

տագրութեան կուիներուն նահատակուած Հ.Մ.Ը.Մ. ական եղբ. Վիգէն Զաքարեանի յիշատակին:

«Դժբախտաբար մրցումը նախատեսուած ձեւով չկատարուեցաւ: Նախատեսուած էր մրցումը կատարել Լիբանանի հեծելաբաշարի բոլոր ակումբներուն միջեւ, սակայն վերջին պահուն կամքէ անկախ պատճառներով կարելի չեղաւ այդ մէկը իրագործել, կը խոստանանք սակայն յառաջիկային կատարել», շեշտեց եղբ. Քէշիշեան:

Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ապագայ ծրագիրներուն մասին խօսելով, եղբ. Քէշիշեան յայտնեց, որ Շրջանային Վարչութիւնը կը նպատակադրէ Հ.Մ.Ը.Մ. ի միջմասնաճիւղային միօրեայ մրցաշարքեր կազմակերպել:

Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան մարզական աշխատանքներու ծիրին մէջ, եղբ. Քէշիշեան նշեց, որ ԼԵՎԱՄ-ի աշխատանքները արդէն իսկ ընթացքի մէջ են: Ան յայտնեց, որ անցեալ տարի լիբանանահայ 17 վարժարաններ իրենց մասնակցութիւնը բերած էին ԼԵՎԱՄ-ի խաղերուն: Այս տարի ԼԵՎԱՄ-ի յանձնախումբը վերամուտէն ի վեր կը գործէ՝ պատրաստելու համար ԼԵՎԱՄ-ի նոր յայտագիրը:

Ֆուտբոլի պարագային, Հ.Մ.Ը.Մ. ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետը շեշտեց, որ կազմակերպական առումով ներկայիս Հ.Մ.Ը.Մ. ի ֆուտբոլը կ'ապրի վերակազմաւորման եւ վերաորակաւորման հանգրուան մը:

Իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ. ի ֆուտբոլի խումբը կը գտնուի Լիբանանի Գ. դասակարգին մէջ: Այս մէկը մեծ ցնցում յառաջացուցած է, ինչպէս մեր, նաեւ Հ.Մ.Ը.Մ. ի բոլոր համակիրներուն մօտ:

«Թերեւս պէտք է այս իրականութեան դրական կերպով մօտենալ եւ այսուհետեւ այլ ձեւով աշխատիլ: Այդ նոր ձեւին մասին ֆուտբոլի յանձնախումբը իր տեսակէտը ունեցաւ եւ նախաձեռնեց Հ.Մ.Ը.Մ. ի տրամադրուած հողածածկ դաշտը արուեստական խոտով ծածկուած ֆուտբոլի իսկական դաշտի մը վերածելու աշխատանքին: Իր ընտրուած թուականէն ի վեր, Շրջանային Վարչութիւնը, ֆուտբոլի յանձնախումբին



ԼԵՎԱՄ-ի մրցանակակիր վարժարաններու աշակերտութեան հետ:



ՊիքՖայայի եղեռնի յուշարձան  
այցելութիւն:



PhotoRAFFI

պատանիներուն, որպէսզի աւելի փարին Ֆուլթայոլին, փարին Հ.Մ.Ը.Մ.ին եւ դառնան Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ ներկայացուցչական խումբի անդամներ:

«Մենք արդէն իսկ սկսած ենք Ֆուլթայոլի դպրոցի աշխատանքներուն եւ մեր մօտ արձանագրուած են 9-14 տարիքը ամբողջացուցած 179 պատանիներ, որոնք օրինաւոր կերպով Ֆուլթայոլի փորձերու կը հետեւին: Մենք այսօր սերմեր կը ցանենք, որպէսզի տարիներ ետք անոնց պտուղները քաղենք», շեշտեց ան:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ Ֆուլթայոլի յանձնախումբին հիմնական նպատակն է փոքրերէն մինչեւ ներկայացուցչական խումբ շրջան ամբողջացնելու համար օղակներ ստեղծել, որպէսզի անոնց միջեւ բաց մը չարձանագրուի:

Ֆուլթայոլի դպրոցի աշխատանքներուն եւ ջանքերուն զուգահեռ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը այցելեց նաեւ Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ գտնուող Հ.Յ.Դ.ակումբները եւ հանդիպումներ ունեցաւ պատասխանատու

հետ գործակցարար, ամէն ջանք ի գործ դրաւ եւ կը շարունակէ՝ առանց ճիգ խնայելու վերակազմաւորելու Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի խումբերը եւ աշխուժացնելու Ֆուլթայոլը:

Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի ներկայացուցչական խումբին եւ դպրոցին մարզումները ստանձնած է եղբ. Գէորգ Կարապետեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի դպրոցին զուգահեռ, եղբ. Յակոբ Կիւլիւմեան ստանձնած է Անթիլիասի մէջ 50-60 պատանիներու Ֆուլթայոլի մարզումը:

Շրջանային Վարչութիւնը գնահատանքի իր խօսքը ունի ըսելիք Ֆուլթայոլի յանձնախումբի բոլոր անդամներուն, որովհետեւ իրենց ճիգերով է, որ այսօր դաշտը գրեթէ աւարտած է»:

Եղբ. Քէշիշեան յայտնեց, որ Ֆուլթայոլի խտածածկ դաշտը իր թան մը պիտի հանդիսանայ յիբանանահայ գաղութի





Հ.Մ.Ը.Մ.ի  
«Հայր Պողոս Արիս»  
դաշտը:

PhotoRAFFI

մարմիններուն հետ, անոնց ներկայացնելով իր փափաքը՝ վերակազմաւորելու Ֆուլթայոյի թաղային խումբերը, որոնք կամուրջը պիտի ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոյի դպրոցին եւ ներկայացուցչական խումբին միջեւ:

«Ֆուլթայոյի դպրոցին մէջ մինչեւ 14 տարեկան մարզուած փոքրերը, երկրորդական խումբերու պարագային, իրենց յաւելեալ մարզումները պիտի ստանան եւ լաւագոյն տարրերուն զտումով պիտի կազմուի ներկայացուցչական խումբը», ըսաւ ան՝ աւելցնելով, որ ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի երկու խումբեր արդէն իսկ իրենց մասնակցութիւնը կը բերեն «Ամալ» եւ «Շապապ» տարիքային խումբերու ախոյանութիւններուն, իսկ մնացեալ խումբերը իրենց



Վիգէն Չաքարեանի յիշատակին հեծելարշաւի մրցումէն ետք:

PhotoRaff



մասնակցութիւնը պիտի բերեն Հ.Մ.Լ.Մ.ի կազմակերպելիք երկրորդական խումբերու ախոյեանութիւններուն:

Եղբ. Քէչիշեան շեշտեց, որ Շրջանային Վարչութեան փափաքին արդէն իսկ ընդառաջած են եւ ներկայիս կազմուած են թաղային 10 խումբեր, որոնց համար Շրջանային Վարչութիւնը կազմած է ֆուլթայոյի երկրորդ յանձնախումբ մը, որ պիտի կազմակերպէ Հ.Մ.Լ.Մ.ի երկրորդական խումբերու ֆուլթայոյի ախոյեանութիւնը:

«Ճիշդ է, որ այսօր Հ.Մ.Լ.Մ. կը գտնուի երրորդ դասակարգի մէջ, սակայն աշխատանք կը տարուի, եւ կը մաղթենք, որ մօտիկ ապագային Հ.Մ.Լ.Մ. կը գտնուի հոն, ուր իրեն վայել է: Ներկայացուցչականին ընթացքը եւ յառաջդիմութիւնը եւս կարելոր է մեզի համար, որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.ի դպրոցէն հասած մարզիկները պէտք է իտէպլ մը ունենան եւ ձգտին առաջնակարգ մակարդակի վրայ ֆուլթայոյ խաղալ», ընդգծեց ան:

Եղբ. Քէչիշեան յայտնեց, որ վերջերս Լիբանան այցելած է Արաբական Միացեալ Էմիրութիւններու քաղաքացի, լրագրող Մանսուր Ապտալլա, որ մարզական լուրերու հաղորդա-



Սա. Գիս Ազնաւուրեանի այրիին յուշանուէրի յանձնում:

վար է «Պայնունա Մետիա Կրուփ» պատկերասփիւռի կայանին մէջ: Ան նշեց, որ Ապտալլա ներկայիս կը ձեռնարկէ գիրքի մը պատրաստութեան, Ասիոյ ֆուլթայոյի հնագոյն տասը ակումբներուն մասին:

Իր պրպտումներուն մէջ ան բացայայտած է, որ Ասիոյ մէջ կան ֆուլթայոյի աւելի քան հարիւր հազար խումբեր, եւ Հ.Մ.Լ.Մ. իր հիմնադրութեան թուականով կը գրաւէ 7րդ դիրքը, իսկ Հ.Մ.Լ.Մ. Լիբանանի հնագոյն մարզական ակումբն է: «Մանսուր Ապտալլա, որ Լիբանանի ֆուլթայոյի ֆետերասիոնին ճամբով գտաւ մեզի, մեծ հմայքով խօսեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի մասին: Ան տեղեակ էր այն իրականութենէն, որ Հ.Մ.Լ.Մ. լիբանանեան առումով եղած է առաջին խումբը, որ 1970ին մասնակցած է

Ասիոյ ախոյեանութեան եւ Գ. կամ Դ. դիրքը զրաւած է, որովհետեւ մերժած է մրցիլ իսրայէլեան խումբին հետ: Ան անուանները տուաւ Լեւոն Ալթունեանին, Վարդիվառ Յովհաննէսեանին եւ իր տպաւորութիւնները փոխանցեց: Հեղինակին նախատեսութեամբ, իր պատրաստած գիրքին մէջ 40էն 50 էջ պիտի տրամադրուի Հ.Մ.Լ.Մ.ին», ըսաւ եղբ. Քէչիշեան:



**Elegance Plus**  
Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**



# ՖՈՒԹՊՈՒԼԻ ԻՍԿԱԿԱՆ ԴԱՇՏ ՄԸ ՈՒՆԵՆԱԼԸ ԵՐԱԶ ԷՐ ԵՒ ԱՅՍՕՐ ԻՐԱԿԱՆԱՑԱԲ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի «Հայր Պօղոս Արիս» ֆութպոլի դաշտին բացման առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան քարոզչական յանձնախումբը դիմեց ֆութպոլի ներկայացուցչական յանձնախումբի ատենապետ եղբ. Սարգիս Վարժապետեանին՝ իր գլխաւորած յանձնախումբին աշխատանքները ծանօթացնելու համար:

**Ե**ղբ. Վարժապետեան յայտնեց, որ ներկայիս յանձնախումբին նպատակն է դպրոցի եւ թաղային ֆութպոլի խումբերը կեանքի կոչել, որպէսզի նախ եւ առաջ խումբերը վերակենդանանան եւ ապա՝ կարելի ըլլայ մարզումներու ընդմէջէն Հ.Մ.Ը.Մ.ական ֆութպոլին մակարդակը բարձրացնել:

Եղբ. Վարժապետեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի դպրոցը ծնունդ առաւ 12 Դեկտեմբեր 2009ին, երբ սաները սկսան իրենց անդրանիկ փորձերը կատարել:

Ան նշեց, որ տարիքային խառն դրուժեամբ երեք ամսուան մարզումներէ ետք՝ կարելի եղաւ խումբերը բաժնել տարիքային դրուժեամբ:

«Ներկայիս ֆութպոլի դպրոցը ունի տարիքային երեք դասարաններ, որոնք կը ներկայանան իբրեւ 2000ի եւ 2001ի ծնունդներ, երկրորդը՝ 1998ի եւ 1999ի ծնունդներ, երրորդը՝ 1996ի եւ 1997ի ծնունդներ: Այս խումբերուն կողքին կան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի կրտսերներու երկու խումբերը, որոնք կ'ընդգրկեն 1994ի եւ 1995ի ծնունդները, ինչպէս նաեւ՝ 1992ի եւ 1993ի ծնունդները:

Մարզիչներուն մասին խօսելով, եղբ. Վարժապետեան յայտնեց, որ անոնք Հ.Մ.Ը.Մ.ի նախկին ֆութպոլիստներ են: Աւագ մարզիչն է եղբ. Գէորգ Կարապետեան, իսկ օգնական մարզիչը՝ Յակոբ Տէմիրճեան:

Ան նշեց, որ մարզումները օրինաւոր ձեւով կը կատարւին շաբաթական երկու անգամ: Շաբթուան մէջ օր մը եւ Շաբաթ օրերը»:

Եղբ. Վարժապետեան նշեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի տարիքային բոլոր խմբաւորումներուն համար մրցաշարքեր կը կազմակերպուին:

Խումբերու տարազաւորման, տարբեր դաշտերու մէջ անոնց մարզումին, մրցումներու մասնակցութեան համար երթեւեկի եւ ֆութպոլիստներու ապահովագրութեան ծախսերը կը հոգայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական յանձնախումբը:

Եղբ. Վարժապետեան շեշտեց, որ առիթը բաց է բոլորին դիմաց՝ մաս կազմելու ֆութպոլի խումբերուն:

Այս առիթով, ան շնորհակալական խօսք ուղղեց ֆութպոլ-



PhotoRAFFI



լի ներկայացուցչական յանձնախումբին, որոնք մաս կր կազմեն Միմոն Զաքարեան, Վաչէ Տիչչէֆէնեան, Զաւէն Տէր Պետրոսեան, Աւօ Աշճեան եւ Կարէն Սալխանեան:

Եղբ. Վարժապետեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբերը կը կոչուին նահատակ կամ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու անունով: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի դպրոցին աշխատանքը շատ կարեւոր է, որովհետեւ պատանիները դպրոցին մէջ պիտի ստանան իրենց մարզական եւ Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութիւնը եւ կրտսերներու խումբին մէջ է, որ պիտի դառնան փորձառու եւ արհեստավարժ ֆուտբոլիստներ:

«Դպրոցին աշխատանքը հիմնական է եւ պէտք է այդ առումով միշտ հետեւողական ըլլայ: Դժբախտաբար, որոշ շրջանի մը համար այս աշխատանքը դադրած էր եւ այդ պատճառով, այսօր մեր ներկայացուցչական խումբը կը գտնուի ներկայ վիճակին մէջ: Մենք վերակազմաւորման լուրջ եւ կարեւոր հանգրուանի մը մէջ ենք, որպէսզի կարենանք երեք կամ չորս տարիէն ունենալ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբ,



ընդգծեց եղբ. Վարժապետեան: Հ.Մ.Ը.Մ.ի «Հայր Պօղոս Արիս» ֆուտբոլի դաշտին մասին խօսելով, եղբ. Վարժապետեան յայտնեց, որ դաշտը արւեստական խոտով ծածկելու ծախսերը բաւական մեծ էին, սակայն ամէն ջանք ի գործ դրուած է Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցին իսկական դաշտ մը ապահովելու: «Այս ուղղութեամբ ֆուտբոլի յանձնախումբը դիմեց

Հ.Մ.Ը.Մ.ական երկու եղբայրներու, որոնք սիրալոյսով այդ փոխատուութիւնը կատարեցին, որպէսզի դաշտը կառուցւի: Մեզի համար ֆուտբոլի իսկական դաշտ մը ունենալը երազ էր եւ այսօր իրականացաւ», շեշտեց եղբ. Վարժապետեան:

Վերջապէս, ան ըսաւ, որ դաշտը տրամադրուած է Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր խումբերուն եւ յառաջիկայ տարուան ընթացքին ճիշդ պիտի չինայուի, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան հետ գործակցաբար, դաշտին վրայ կազմակերպուին ֆուտբոլի միջ-մասնաճիւղային մրցաշարքեր:








- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԴՊՐՈՑԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԻՐԵՆՑ ՏՊԱԻՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«**այր Պօղոս Արիս» խոտա-  
ծածկ դաշտին քացման  
առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբա-  
նանի Շրջանային Վարչութեան  
քարոզչական յանձնախումբը այ-  
ցելեց դաշտ եւ ծանօթացման հան-  
դիպում մը ունեցաւ ֆութպոլի դպրո-  
ցի պատանիներուն հետ, որոնք ու-  
րախութեամբ իրենց տպաւորու-  
թիւնները փոխանցեցին նորաս-  
տեղծ դպրոցին եւ պատասխանա-  
տուներուն մասին:**

Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցին միա-  
ցայ ֆուտբոլի սկսելէն ամիս մը ետք:  
Բոլոր ընկերներս արդէն ֆուտբոլի  
փորձերու կը մասնակցէին, հետեւաբար  
ես ալ հետեւեցայ անոնց օրինակին,  
որովհետեւ ես կը սիրեմ Հ.Մ.Ը.Մ.ը եւ  
ֆուտբոլը: Դպրոցին մէջ մենք ճրի-  
բար կը սորվինք ֆուտբոլ խաղալ, եւ ես  
արդէն տարբերութիւն մը կը զգամ  
փորձերէն գրեթէ 10 ամիս ետք:

Երբ Հ.Մ.Ը.Մ.Ի գինանշանը կրող շա-  
պիկով խաղամ, ինքզինքս շատ զօրաւոր  
կը զգամ:

Ես կը փափաքեմ ապագային լաւ  
ֆուտբոլիստ դառնալ եւ կը քաջալերեմ  
բոլոր ընկերներս, որպէսզի գան եւ  
իրենք ալ սորվին ֆուտբոլ խաղալ:

### ԴՐՕ ԹԵՔԿԵԼԵԱՆ (11 տարեկան)

Ես մաս կը կազմեմ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆու-  
թպոլի դպրոցի կրտսեր պատանիներու  
խումբին, որովհետեւ կը սիրեմ  
Հ.Մ.Ը.Մ.ն ու ֆուտբոլը եւ կը փափա-  
քեմ, որ ֆուտբոլը զարգանայ ու յաւել-  
եալ աշխուժութիւն ստեղծէ:

Ես կը փափաքեմ ապագային Հ.Մ.-  
Ը.Մ.Ի լաւագոյն ֆուտբոլիստներէն մէ-  
կը ըլլալ: Կը քաջալերեմ ընկերներս, որ  
գան եւ միանան դպրոցին ու ճրիաբար

ֆուտբոլ խաղալ սորվին: Ես շատ կը սի-  
րեմ խումբս եւ մարզիչներս, որոնք շատ  
լաւ կը վարուին մեզի հետ եւ մնայուն  
կերպով նոր փորձեր կը կատարեն ու  
նոր թեքնիքներ կը սորվեցնեն:

### ՊԱՐՈՅՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ (10 տարեկան)

Ես հինգ ամիսէ ի վեր կը հետեւեմ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցի փորձե-  
րուն եւ կը քաջալերեմ ընկերներս, որ-  
պէսզի գան եւ մեզի հետ ֆուտբոլ խա-  
ղալ սորվին:

Կը փափաքեմ այս փորձերուն հետե-  
ւիլ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի պատիւը բարձր պահել  
ու մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայա-  
ցուցչական խումբին եւ ի վերջոյ ապա-  
զային մեկնիլ Եւրոպա ու եւրոպական  
խումբերէն ֆուտբոլ խաղալ:

Փորձերը շատ լաւ կ'ընթանան: Մենք  
մնայուն կերպով նոր փորձեր կը կատա-  
րենք՝ կատարեալ կարգապահութեամբ:  
Կը մաղթեմ, որ ընկերներս միշտ հոս  
մնան եւ մենք միշտ միասին խաղանք ու  
Հ.Մ.Ը.Մ.ին պատիւը բարձր պահենք:

### ԽԱԺԱԿ ՊԱՐՈՆԵԱՆ (13 տարեկան)

Արդէն իսկ տարի մըն է, որ Հ.Մ.-  
Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցին մաս կը կազ-  
մեմ եւ շատ գոհ եմ անկէ, որովհետեւ  
մեզի լաւ ֆուտբոլ խաղալ կը սորվեց-  
նեն. հոս ընկերային շատ լաւ մթնոլորտ  
կայ:

Ես կը փափաքեմ, որ բոլոր ընկեր-  
ներս գան եւ մասնակցին դպրոցի փոր-  
ձերուն՝ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.Ի  
պատիւը: Ես երբ Հ.Մ.Ը.Մ.Ի գինանշանը  
կրող շապիկը կրեմ, կը զգամ, որ  
կը ներկայացնեմ հայրենիքս եւ ջանք  
կը թափեմ աւելի լաւ խաղալու:

Ապագային կ'ուզեմ Հ.Մ.Ը.Մ.Ի

խումբին հետ խաղալ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի  
պատիւը բարձր պահել:

### ՇԱՀԷ ՅԱԿՈՐԵԱՆ (13 տարեկան)

Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցին մաս  
կը կազմեմ անոր առաջին փորձէն իսկ,  
որովհետեւ թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը կը սիրեմ եւ  
թէ՛ ֆուտբոլը: Ես կը փափաքեմ փայ-  
լուն ապագայ մը ունենալ իբրեւ ֆուտ-  
պոլիստ: Հ.Մ.Ը.Մ.Ի դպրոցին մաս կազ-  
մելով կը զգամ, որ ես կարեւոր բան մը  
ունիմ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի պատիւը կը կրեմ:

Ես շատ գոհ եմ փորձերէն, որովհե-  
տեւ նոր փորձեր կը կատարենք, եւ բո-  
լոր ընկերներս կարգապահ են, իսկ  
մարզիչները եւ պատասխանատուները  
մեզի շատ լաւ հոգ կը տանին:

Կը փափաքեմ, որ բոլոր հայ պատա-  
նիները Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցի  
փորձերուն ներկայ գտնուին, իրենք զօ-  
րանան եւ խումբը զօրացնեն:

### ՇԱՐՊԷԼ ԱՊԷԹԵԱՆ (11 տարեկան)

Երեք ամիս եղաւ, որ կը հետեւեմ  
փորձերուն: Շատ ուրախ եւ գոհ եմ այս  
փորձերով եւ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի  
դպրոցին մէջ շատ լաւ մթնոլորտ մը  
կը տիրէ: Մեզի շատ լաւ հոգ կը տանին  
եւ սրտբաց կ'ընդունին մեզ:

Հ.Մ.Ը.Մ.Ի կարողութիւններուն կը  
հաւատամ եւ գիտեմ, որ Հ.Մ.Ը.Մ.ը շատ  
լաւ կը մարզէ իր խումբերը, ապագային  
յաղթանակներ ապահովելու նպատակով:

### ՎԻԳԷՆ ԹԱՆԱՇԵԱՆ (12 տարեկան)

Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուտբոլի դպրոցին բա-  
ցումէն ի վեր փորձերուն կը հետեւեմ եւ  
Հ.Մ.Ը.Մ.ը սիրելով է, որ կու գամ փորձե-  
րուն: Հ.Մ.Ը.Մ.ը իմ մէջս հայ ըլլալու եւ



հպարտ ըլլալու զգացումը կը զօրացնէ: Ես ընկերներս միշտ կը քաջայերեմ, որ մասնակցին ֆուլթայոյի փորձերուն, ուր մենք աւելի ռենինք այլ խումբերու դէմ մրցումներ կատարելու:

Շատ գոհ եմ փորձերէն, պատասխանատուները շատ լաւ հոգ կը տանին: Կը փափաքիմ, որ խումբը բազմանայ եւ մնայուն յաղթանակներ տանի, հասնելով ախոյեանութեան:

**ԳԷՈՐԳ ՊՈՅԱՃԵԱՆ**  
(12 տարեկան)

Հ.Մ.Ը.Մ.ը մեծ է եւ անոր ապագան փայլուն պէտք է ըլլայ: Հ.Մ.Ը.Մ.ի տարազը սովորական ֆուլթայոյի տարազ մը չէ, այլ՝ ապագայի յոյս մը, որովհետեւ ես կ'ըզեմ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հետ ֆուլթայոյ խաղալ եւ Հ.Մ.Ը.Մ.ի անունը բարձր պահել:

Փորձերէն շատ գոհ եմ եւ ամէնէն աւելի կը սիրեմ զոյգ կորով ֆուլթայոյ խաղալու պահերը: Պատասխանատուներէս շատ գոհ եմ, որովհետեւ մեզ լաւ կը մարզեն: Կը մաղթեմ, որ երբ մեծնամ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոյի խումբին մաս

կազմեմ եւ Հ.Մ.Ը.Մ.ի ու հայութեան անունը բարձր պահեմ:

**ԿԷՐԻ ԼԵՓԷՃԵԱՆ**  
(10 տարեկան)

Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցին մաս կը կազմեմ երկու ամիսէ ի վեր: արդէն որոշ բարելաւում մը կը զգամ եւ յոյս ունիմ, որ քանի մը տարիէն կը դառնամ ֆուլթայոյիստ:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը հագուելիմ հպարտ կը զգամ, որ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոյիստ եմ: Կը փափաքիմ, որ բոլոր պատանիները Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցին միա-



«ժողէֆ Նալպանտեան» խումբ



«Մանուէլ Ալթունեան» խումբ

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ԴՊՐՈՑԻՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

### 1992Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Սերժ Սելիքեան, Միշէլ Պուլէտ, Մայքըլ Սաատ, Յարութ Լափաճեան, Ալէք Ալըճեան եւ Յակոբ Պայրազտարեան:

### 1993Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Կրեկորի Շիշոյեան, Մանուէլ Հալէպեան, Վրէժ Այվազեան, ճորճ Տարագճեան եւ Տիգրան Վարդան:

### 1994Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Գեորգ Գունուշեան, Քրիստ Տարագճեան, Կարէն Խաչատուրեան, Վիթալի Աուն, Սերժ Տօնապետեան, Սեւակ Գուզուքեան, Սերուժ Պալթարեան, Փիթըր Սարտինի, Գօգօ Պասմաճեան, Շանթ Պալեան, Սարհատ Գէթսէմանեան, Գօգօ Գասպարեան եւ Գեորգ ճուհարճեան:

### 1995Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Սարո Նոխուսեան, Նարեկ Ասուրեան, Աբօ Բարսեղեան, Սերժ Քէօսեան, Յակոբ Նաճարեան եւ Էլիա Խաչօ:

### 1996Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Մամաս Քէհեան, Սերժ Տիշէքէնեան, Արա Փանոսեան, Մանուէլ Քէշիշեան, Անդրանիկ Պապեան, Աւետիս Աւետիսեան, Էտուարտ Թալակեան, Կարապետ Եագուպեան, Յարութ Անտոնեան, Միեր Սապունճեան, Սարգիս Սերոբեան եւ Զատիկ-Սեւակ Կիլեսերեան:

### 1997Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Ռուանտ Կարապետեան, Անէտ Իպրահիմ, Ալէքսի Եագուպեան, Կարապետ Շատոյեան, ճորճ Պարսում, ճորճ Օհաննէսեան, Յովհաննէս Պաղնապանեան, Յովիկ Մինասեան, Հրաչ Ազնիկեան, ժողէֆ Ապու Ռըժայի, Գօգօ Գարատալեան, Գրիգոր Ահարոնեան, Միեր Սիրմէնեան, Նժդեհ Կոտալազեան, Փանոս Սազարեան, Սերժ Գույումճեան, Սերժ Արիկեան, Շահէ Յակոբեան եւ Վարդան Մամիկոնեան:

### 1998Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ

Ապպուտ Խուրի, Էնտրիս Ազգէ, Արմէն Ռոքրայետրոսեան, Աւօ-Ժագ Արմաղալեան, Բենիամին Յակոբ-



նան, որպէսզի մարզիկներուն թիւը շատնայ:

Մենք այս փորձերուն անվճար կերպով կը հետեւինք, կը սորվինք շատ բաներ, որոնցմէ կարելոր կը նկատուի նաեւ կարգապահութիւնը:

**ՌՈՂԱՆՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**  
(13 տարեկան)

Եօթը ամիս եղաւ, որ կը մարզուիմ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի դպրոցին մէջ. շատ գոհ եմ ընդհանուր միջնորոտէն եւ

մեզի հանդէպ ցուցաբերուած հոգատարութենէն:

Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը հագուելով կը ըզգամ, որ իմ ազգս կը յարգեմ եւ այդ պատճառով ալ Հ.Մ.Ը.Մ.ը կարելոր է ինծի համար, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը սիրելով հայ կը մնամ:

**ՍԵՐԺ ԱՐԻԿԵԱՆ**  
(14 տարեկան)

Շատ ուրախ եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի դպրոցին մաս կը կազմեմ,

որովհետեւ ես գրեթէ ֆուտպոլ խաղալ չէի գիտեր, սակայն հիմա բաւական բան սորված եմ եւ կը մաղթեմ շարունակել ֆուտպոլի մէջ մարզումներս՝ մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին մաս կազմեմ: Հ.Մ.Ը.Մ.ը ազգին ժառանգութիւնն է եւ այդ միութիւնն է, որ ինծի ֆուտպոլ խաղալ սորվեցուցած է եւ ես իմ կարգիս Հ.Մ.Ը.Մ.ի պատիւը բարձր պիտի պահեմ:

**ՔՐԻՍՏ ԱՐԹԻՆԵԱՆ**  
(13 տարեկան)



**«Վազգէն Տէր Դուկասեան» խումբ**



**«Եղիշէ Մանուկեան» խումբ**

եան, Պերճ Սեֆիլեան, Տանի Տիպա, Ֆատի Աքբուզի, Կարէն Չոլաքեան, Կարէն Գասպար, Կարո Եագուպ, ճորճ Իշխանեան, Ժան Քահքէճեան, Խաչիկ Սերոբեան, Մարտիրոս Միսեան, Սովսէս Գարագուզեան, Փօլ Ներսէս, Սագէ Քենպէլեան, Սեւակ Ժամկոչեան, Դրո Գարատաղեան, Վիգէն Նեսիմեան, Եորկո Խուրի եւ Եուսէֆ Պազգի:

**1999-Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

Արամ Հաննա, Աւետիս Յովհաննէս, Շարպէլ Ապէթեան, Տիգրան-Հրակ Ընգապապեան, Տիրան Շատոյեան, Էլի Ապէթեան, Կարապետ Աւեսեան, Յակոբ Աքիզեան, Յակոբ Մարկոսեան, Հերի-Յարութ Թասլաքեան, Յովսէփ Պետրոսեան, Հրաչ Մուրատ, Գեորգ Պետիրլեան, Գրիգոր Ղազարեան, Սիեր Թրթռեան, Միսաք-Սերժ Գանտահարեան, Սերժ Ուրֆալեան, Սերժ Ժամկոչեան, Սերժ Կիրիւնլեան, Սեւակ Թորոսեան, Շիրազ Կարապետ եւ Դրո Թեքլեյեան:

**2000-Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

Արամ Ադամեան, Արտո Ասատուր, Գարլոս Նորընծայեան, Էմանուէլ Պոլատ, Համբիկ Սեֆիլեան, Յովիկ ճենանեան, Յովիկ Արթին, Հրակ Եւմուշազեան, Ճօ Գասապեան, ճոնի Սանժայ, Գրիգոր Սերայտարեան, Սոհամնէտ Իպրահիմ, Փիթըր Չաքարեան, Սերժիօ Ահարոնեան եւ Վարազ-Կայծ Չաքրրեան:

**2001-Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

Աւագ Պալապանեան, Պետրոս Պետրոս, Պետրոս-Գեորգ Պետրոս, Քրիստ Հապէշեան, Ֆրէտի Չաքրրեան, Կապրիէլ Ադամեան, Համազասպ Օհան, Հենրի-Հայկ Չաքարեան, Յովհաննէս ճենանեան, ճոն Մարգարեան, Մանուէլ Խանճեան, Սարգիս Սարգիսեան, Սերժ Օսկեան եւ Եուսէֆ Ալամ:

**2002-Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

Անթոնի Սանժայ, Գարլոս Մոսկոֆեան, ճորճիկ Աւետիսեան, Քելըն Ստեփան, Գրիգոր Քիլեճեան, Մայք Ատուրեան, Րաֆֆի Գարատաղեան, Սերժ Գասապեան, Շանթ Ուրֆալեան, Ստեփան Յակոբեան, Սթիւ Քէշիշեան, Վահէ Եւմուշազեան եւ Վարանդ Պաքչաճի:

**2004-Ի ԾՆՈՒՆԴՆԵՐ**

Մարտիկ Յովհաննէս, Նարեկ Կիրիւնեան եւ Փօլ Գաժոյեան:



**«Սարգիս Սարգիսեան» խումբ**



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, ԻԱ. ՄԱՍ

«Այս յանձնախումբին պարտականութիւնը պատի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ֆուլթայթասները իրենց կարողութեան չափով խումբերու բաժնել, խումբերուն խմբապետներ ընտրել, խմբապետներուն միջոցաւ ամսավճարներ հաւաքել, ֆուլթայթի շուրջ դասախօսական ժողովներ սարքել, խաղացուցակ պատրաստել: Յանձնախումբին բոլոր որոշումները կրնան գործադրութեան դրուել վարչութեան վաւերացումէն վերջ» (Ճիստ 1927 Ապրիլ 25):

Երիտասարդ Կաթողիկէ Միութեան վարիչը՝ Մկրտիչ Պատիլ, Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետին դիմելով, կ'առաջարկէ հեծե-

լանիւի մրցում մը կազմակերպել Հ.Մ.Ը.Մ.ի լայն օժանդակութեամբ: Եկած առաջարկը վարչական ժողովին նիւթ դառնալէ ետք, յարմար կը տեսնուի խառն ժողով մը գումարել: Ժողովին ընթացքին նկատի կ'առնուին ձեռնարկին նորութիւնը եւ բերելիք հասոյթը: Այս առաջին հանդիպումը կը վերջանայ միջազգային ողիմպիական մը կազմակերպելու առաջադրութեամբ: Երիտասարդ Կաթողիկէներու Միութեան հետ բանակցութիւն վարելու պարտականութիւն կը տրուի Բիւզանդ Թիւֆէնքճեանին, Լուտեր Մասպանճեանին եւ Միհրան Կարապետեանին:

Կատարուած բանակցութիւնները դրական արդիւնք կու տան, հետեւեալ պայմաններով.-

«Միջազգային ողիմպիականի յայտագրին պատրաստութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը լիազօր է, ինչպէս նաեւ խաղերու, փորձերու, կազմակերպչական գործին: Հ.Մ.Ը.Մ.ը ողիմպիականին համար երբեք ծախս պիտի չընէ, իսկ ողիմպիականէն որոշ գումար մը պիտի յատկացուի Հ.Մ.Ը.Մ.ին: Արտաքին բոլոր աշխատանքները պիտի տանի սերքը-վայր գտնել, տոմսեր եւ յայտարարութիւններ հրատարակել, շքանշաններ հայթայթել Ա.Բ.Գ. հանդիսացողներուն: Ողիմպիականը կատարել Մայիս 29ին» (ատենագրութիւն, Մայիս 24ի):

Հ.Մ.Ը.Մ.ը նախանձախնդիր հայուն արժանապատուութեան օտար մրցորդներու հետ, եւ օտար հասարակութեան մը ներկայութեան, անմիջապէս կը սկսի փորձերու:

Մանսուրեան եւ Պեքէրեան շաբաթը երեք անգամ ողիմպիական խաղերու փորձերուն կը հսկեն: Շուէտական մարզանքները կը վարէ Բարգէն Վահրամեան, իսկ բուրգերու փորձերը կը կատարուին Մասպանճեանի հսկողութեամբ:

Ողիմպիականը տեղի կ'ունենայ որոշուած թուականին, Սուլթանիէի խաղավայրին վրայ, հազարի չափ ընտրեալ հասարակութեան մը ներկայութեան:

«Հ.Մ.Ը.Մ.ը իր բոլոր կազմով ներկայ էր: Ողիմպիականին կը մասնակցէին 33 սկաուտներ եւ 60ի մօտ մարզիկներ: Սկաուտներուն, մարզիկներուն, Ազգ. վարժարանի աշակերտութեան տողանցքը եւ շուէտական մարզանքը, որ կատարուեցաւ Փրանսական զինուորական նուազախումբին առաջնորդութեամբ, մեծ տպաւորութիւն գործեց ներկաներուն վրայ:

«Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները այս ողիմպիականին ձեռք բերին գովելի արդիւնք: 108 կէտերէն Հ.Մ.Ը.Մ. շահեցաւ 76 կէտ:



«Կաթողիկէ Երիտասարդներու Միութեան վարչութիւնը խորին շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին, իր բերած աշխատանքին՝ այս ձեռնարկին յաջողութեան համար» (ատենագրութիւն 31 մայիս 1927ին):

«Ազգակ»ի 30 Մայիս 1927ի թիւին մէջ, «Անդրանիկ Միջազգային Ողիմպիական Հալէպի մէջ» խորագրին տակ կը կարդանք.

«... Հո՞ծ բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ Հալէպի միջազգային անդրանիկ ողիմպիականը: Ներկայ էին, զօրավարին քաղաքէն բացակայութեան հետեւանքով, փոխանորդը, կուսակալը, կրթական նախարարը, քաղաքապետը:

«... Մօտ քառասուն Ա. Բ. Գ. հանդիսացող մրցորդներուն մէջ, հայերը կը շահին 34 մրցանակներ»:

Սկստական շարժման աւելի զարկ տալու, ինչպէս՝ ֆութպոլի պարագային, վարչութիւնը կը կազմէ առաջին Սկստաւ. Խորհուրդը, բաղկացած Լուտեր Մասպանաճեանէ, Բարգէն Վահրամեանէ եւ Կոպեռնիկ Մանսուրեանէ: Սկստաւ. Խորհուրդը առաջին իսկ օրէն կը ծրագրէ ու կը հաստատէ կանոնաւոր դաստիարակութեան դրութիւն՝ կրթելու եւ մարզելու սկստաւները:

Վարչութիւնը նիւթական հասոյթ մը ապահովելու մտադրութեամբ, կ'որոշէ վիճակահանութիւն եւ հանդէս կազմակերպել: Առաջինին համար կ'որոշուի, ինչպիսիք ըլլալու համար գնումի ծախսերը, անդամներէն եւ համակիրներէն յարմար նուէրներ հաւաքել, իսկ երկրորդ ձեռնարկին համար յայտարարութիւն կը հրատարակուի «դերասանի» շնորհ ունեցող անդամներուն, որպէսզի վարչութեան դիմեն:

Ակումբին մէջ կարգ ու կանոն պահելու, ակումբը Հ.Մ.Ը.Մ.ի անուան ու կոչումին վայել միջավայրի մը վերածելու մտօք, վարչութիւնը հետեւեալ հրահանգները կը պարտադրէ.-

1. Հ.Մ.Ը.Մ.ի անդամները ըստ ծրագիր-կանոնագրի, ամէն տեղ պարտաւոր են հայերէն խօսիլ, մանաւանդ ակումբին մէջ:

2. Ակումբ մտնող ոեւէ անդամ պարտաւոր է զխարկը վերցնել: Ակումբին մէջ բարձր խօսիլ, կռուիլ, ակումբին կարգն ու սարքը խանգարել բացարձակապէս արգիւրուած է:

3. Ակումբի գոյքերուն ձեռք դպցնել արգիւրուած է: Որեւէ առարկայի վնաս հասցնողը նիւթական հատուցումի կ'ենթարկուի:

4. Անդամները զիրար ամէն տեղ բարեւելու են: Մեծերուն հանդէպ յարգալի վերաբերմունք ունենալու են:

Ակումբին ու անդամներուն վերաբերող հրահանգ-կանոնէն զատ, վարչութիւնը նման կանոնագրութիւն մը կը պատրաստէ նաեւ ֆութպոլիստներուն համար:

1. Յառաջիկայ եղանակին Հ.Մ.Ը.Մ.ի այն անդամները որ ֆութպոլ պիտի խաղան, բարեհաճին Յունիս 20էն մինչեւ Օգոստոսի վերջերը արձանագրուիլ Փիլիպոս Դերձակեանի մօտ:



1929. Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի թենիսմէնսներ:

2. Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլիստները չեն կրնար ուրիշ խումբերու հետ, հայ կամ օտար, խաղալ կամ անոնց անդամակցիլ: Դպրոցականները բացառութիւն կը կազմեն:

3. Արձանագրուող ֆութպոլիստը պարտաւոր է եղանակը - խաղի ժամանակաշրջանը վերջացնել:

4. Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ֆութպոլիստները պարտաւոր են ներկայ գտնուելու դասախօսութիւններուն՝ ֆութպոլի կամ այլ նիւթի մասին:

5. Արձանագրուող բոլոր ֆութպոլիստները փորձերու համար նշանակուած օրերը կամ պաշտօնական խաղերուն ստիպուած են ներկայ ըլլալ:

6. Ֆութպոլիստը ինք պիտի հոգայ իր հագած տաբատը, կօշիկը, գուլպան:

7. Ֆութպոլիստներու շապիկը միութիւնը պիտի հոգայ:

8. Արձանագրուող իւրաքանչիւր ֆութպոլիստ պարտի վճարել 10 դրշ. որպէս մէկ տարուան վարձք շապիկի:

Հալէպի մասնաճիւղի վարչութիւնը, որ ընտրուած էր 1926 Օգոստոս 6ին, իր վերջին նիստը գումարելով 1927 Օգոստոս 6ին, քննելէ ետք գանձապահին հաշիւները, պատրաստուած տեղեկագիրը՝ ներկայացնելու համար յաջորդ օրուան ընդհանուր անդամական ժողովին, իր օրակարգի խնդիրներուն լուծումէն ետք կ'աւելցնէ. «Այս վարչութիւնն էր որ Հ.Մ.Ը.Մ.ին ձեւ ու կերպարանք տուաւ Հալէպի մէջ: Օժտեց սեփական ակումբով ու դաշտով: Կահաւորեց ակումբը: Կազմակերպեց ֆութպոլի եւ սկստական խումբերը, միջազգային ողիմպիականը եւ իրականացուց Պէյրութ-Հալէպ ֆութպոլի խումբերուն հանդիպումը:

«Այսօր գոհ սրտով յաջորդ վարչութեան կը ձգէ կազմ ու պատրաստ մեքենայ մը՝ գայն աւելի լաւ աշխատցնելու եւ աւելի արդիւնաւոր դարձնելու համար: Վարչութեան ատենապետ Լուտեր Մասպանաճեան իր խօսքը վարչականներուն ուղղելով կ'ըսէ.





# ՏԻԷԿՕ ՖՈՐԼԱՆ ՏԱՐՈՒՄՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒԻՍՏԸ

յի սխալներ ու չի ստանար անհիմաստ կոչեր:

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Ե**րբ ափրիկեան մոնտիալը կը սկսէր, վստահաբար ոչ ոք կ'ակնկալէր որ ուրուկուէյցի Ֆորլան պիտի յաջողի լուսարձակները իր վրայ կեդրոնացնել: Մոնտիալին ներկայ էին Մեսսին, Ռոնալտոն, Ռուպէնը, Թորէսը եւ այլն, եւ Ֆորլան իբրեւ համեստ խաղացող կը ներկայանար մոնտիալին: Ուրուկուէյի հաւաքականը մեծ յոյսեր կապած էր Ֆորլան-Սուարէզ գոյգին, եւ անոնց յաջողութենէն կախեալ էր խումբին ընթացքը:

Երեսուն օրերը բաւարար էին բոլոր հաշիւները խանգարելու: Մեսսի եւ Ռոնալտո գլխիկոր կը հեռանային: Թորէս եւ Ռուպէն ճիշդ է որ յաջողութեան կ'առաջնորդէին իրենց խումբերը, սակայն անոնք չէին յաջողեր Ֆորլանի նման ճակատագրական դեր ունենալ իրենց խումբերու յաջողութեան մէջ:

Տիէկօ Ֆորլանի Ուրուկուէյը առաջին հանգրուանին կը ըստեղծէր առաջին անակնկալը, երբ դուրս կը ձգէր Ֆրանսուսի եւ Մեքսիքայի հետ կ'անցնէր Բ. հանգրուան: Յաջորդ երկու հանգրուաններուն ուրուկուէյցիք, Ֆորլանի եւ Սուարէզի նշանակած կոլերուն շնորհիւ, քառասուն տարիներ ետք առաջին անգամ ըլլալով կը հասնէին կիսաւարտական, ուր անգիջող պայքարէ ետք կը պարտուէին Հոլանտայէն: Այս մրցումին ձերբ վախճանին նշանակուած կողը հաւանաբար պիտի մնայ բոլոր մոնտիալներու գեղեցկագոյն կոլերէն մէկը: Անոր հեղինակը ուրուկուէյցի Տիէկօ Ֆորլանն էր: Ափսո՛ս, երրորդ դիրքի համար մրցումին, անոնք կրնային յաղթական դուրս գալ, եթէ իրենց բերդապահը չգործէր աններե-

## Ո՞Վ Է ՏԻԷԿՕ ՖՈՐԼԱՆ

Ֆորլան ծնած է 19 Մայիս 1979ին, Մոնթեվիտէօ: Անոր հայրն ու մեծ հայրը եւս ֆուլթպոլիստներ եղած են: Ան առաջին հերթին կը միանայ արժանթինեան Ինտիփենտիընթ խումբին, ուր հռչակաւոր կը դառնայ իբրեւ լաւ կոլ-սքորըր: Երեք տարեշրջանի ընթացքին 91 մրցումի մասնակցելով, ան կը նշանակէ 40 կոլ: Եւ ահա արդէն եւրոպական ակումբներ կը ձգտին իրենց կազմին միացնել ուրուկուէյցին:

Ֆորլանի եւրոպական «Ճանապարհորդութեան» առաջին հանգրուանը կը հանդիսանայ Մ. Ետնայթրտը: 2001-2005 տարեշրջաններուն, Ետնայթրտի հետ ան կը կատարէ 98 մրցում եւ կը նշանակէ 17 կոլ միայն: Ետնայթրտի հետ «ինչ որ բան այն չէ»: Ֆորլան կը հեռանայ Անգլիայէն եւ կը միանայ Սպանիոյ Վիլլարէալին: Սպանական կազմին հետ Ֆորլան կը վերագտնէ կոլ նշանակելու իր յատկութիւնը: Երեք տարեշրջան Վիլլարէալին մաս կազմելով, անոր հետ կը կատարէ 128 մրցում եւ կը նշանակէ 59 կոլ: Իր առաջին տարեշրջանին, խաղընկերներուն հետ, խումբը պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը հասցնէ Զէմփիրնոյ Լիկի մրցաշարին: Միեւնոյն տարին իր նշանակած 25 կոլերով կ'ընտրուի Սպանիոյ լաւագոյն կոլ-սքորըր:

Արդէն Սպանիոյ մէջ ճանչցուած այս ֆուլթպոլիստը կը լքէ Վիլլարէալը եւ 2007ին կը միանայ մայրաքաղաքի Աթլետիքոյին: Մատրիտեան կազմին հետ Ֆորլան յաջող ելոյթներ կ'ունենայ. ցարդ ան մասնակցած է 114 մրցումի եւ նշանակած է 72 կոլ: Անցնող տարեշրջանին ան իր խումբին հետ տիրացաւ Ետնայթրտի Լիկին, պարտութեան մատնելով անգլիական Ֆուլհէմը՝ 2-1 արդիւնքով: Յաղթանակի երկու կոլերն ալ նշանակեց



**Ֆորլան:**

Ֆորլան եւ իր խաղընկերները կը հասնին նաեւ Սպանիոյ բաժակի աւարտականին, սակայն անոնք Սեւիլլայէն կը պարտուին 2-0 արդիւնքով:

Ֆորլան ազգային խումբին կը միանայ 2002ին եւ նոյն տարին կը մասնակցի մոնտիալի՝ իր առաջին կտոր նշանակելով Սենեկալի դէմ:

Հակառակ իր այս յաջողութիւններուն, ինչպէս նշեցինք, մոնտիալի նախօրեակին Ֆորլանի անունը այնքան ալ ծանօթ չէր Ֆուլթպոլի շրջանակներուն: Սակայն Ափրիկեան մոնտիալը ամէն

ինչ փոխեց: Ֆորլան դարձաւ ազգային հերոս: Այն ինչ որ իր հայրը չէր յաջողած իրագործել, այն ինչ որ Ֆրանչեսքոյի չէր յաջողած, Ֆորլան յաջողեցաւ իրագործել: Ան մոնտիալի լաւագոյն կոլ-սքորրըներէն հանդիսացաւ 5 կոլով: Ընտրուեցաւ մոնտիալի լաւագոյն Ֆուլթպոլիստ եւ ափրիկեան մոնտիալի «Երազային խումբ»ի («Տրիմ թիմ») անդամ: Վստահաբար, ոչ ոք պիտի մոռնայ Գերմանիա-Ուրուկուէյ մրցումի վերջին



խումբի հիմնական տարրերէն մէկը: Յաջորդ մոնտիալին մասնակցութեան մասին խօսիլը տակաւին կանուխ է: Բայց ի դէմս բազմաթիւ խաղացողներու, ան կը մնայ արժանի յաւակնորդը ընտրուելու ո՛չ միայն Ափրիկէի մոնտիալին լաւագոյն խաղացողը, այլեւ՝ այս տարեշրջանի՝ 2009-2010ի լաւագոյն Ֆուլթպոլիստը:

վայրկեաններուն Ֆորլանի ուժգին հարուածը, որ ցնցեց Գերմանիոյ բերդին ձողերը:

Տիէկոն ցարդ ազգային խումբին հետ կատարած է 70 մրցում եւ նշանակած է 29 կոլ:

Ֆորլան ամուսնացած է: Ան նաեւ հասարակական գործունէութիւն ունի: Անդամ է Ալեխանտրո Ֆորլան հիմնադրամին, որ կը պայքարի ինքաշարժներ արագ քշելու երեւոյթին դէմ:

Հակառակ իր տարիքին, Ֆորլան տակաւին կը մնայ թէ՛ Աթլետիքօ Մատրիտի եւ թէ՛ Ուրուկուէյի ազգային

with the complements of

# Restaurant Al-Mayass





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՄՆԱՃԻՒԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ 28ՐԴ ՄԱՐԶԱՀԱՆԳԷՍԸ

## Թղթակից ՊԱՂՏՍՍ

**Ի**րաքի Հայոց Թեմի Առաջնորդ Աւագ Արք. Ասատուրեանի հովանաւորութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղին կազմակերպութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային 28րդ մարզահանդէսը տեղի ունեցաւ 30 Սեպտեմբերէն 2 Հոկտեմբեր 2010, մասնակցութեամբ իրաքահայ գաղութի երեք շրջաններու մարզական պատուիրակութիւններուն՝ Հաւրէզք, Պասրա եւ Բէրքուկ:

Մարզահանդէսին առաջին օրը, առաւօտեան ժամը 10ին, հիւր պատուիրակութիւնները հասան Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի ակումբը, ուր դիմաւորուեցան ջերմ ծափահարութիւններով: Կէսօրին, անոնք ճաշի հիւրը եղան Հ.Մ.Ը.Մ.ի տիկնանց յանձնախումբին, որ երեք օրեր շարունակ սիրայօժար

ստանձնեց մարզահանդէսի մասնակիցներուն ճաշի պատրաստութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան, միութեան մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ շրջանային 28րդ մարզահանդէսին պաշտօնական բացումը:

Տէրունական աղօթքով բացումը կատարեց Մեսրոպ Քէչնյ. Գաբրիէլեան: Ապա, վայրկեան մը յոտնկայս լուծեամբ ներկաները յարգեցին բոլոր նահատակներու յիշատակը:

Բացման խօսք արտասանեց Հ.Մ.





Իրաքի երիտասարդական հարցերու նախարարութեան ներկայացուցիչ Իսամ Տիուան:



Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վահէ Միհրանեան: Ան բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Խօսք առաւ նաեւ Իրաքի երիտասարդական հարցերու նախարարութեան ներկայացուցիչը՝ Իսամ Տիուան: Ան դրուատական արտայայտութիւններ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկստական աշխատանքներուն մասին:

Յաջորդեց դրօշակի արարողութիւնը: Հնչեց Իրաքի ազգային քայլերգը եւ սկստական երէց եղբայրներ բարձրացուցին երկրի դրօշը: Շատեր չկարողացան զսպել իրենց ուրախութեան արցունքները...

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի խանդավառ շեփորախումբին առջնորդութեամբ, կատարուեցաւ մարզական եւ սկստական խումբերու տողանցք: Իրաքի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակներով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի սկստական շարքերը եւ Հաւրէզքի, Պասրաջի ու Քէրքուկի մարզիկ-մարզիկուհիները:

Օրուան հանդիսավարը՝ եղբ. Վաղինակ Վահանեան տողանցքը խանդավառեց ազգային ոգեշունչ խօսքերով: Հիւրընկալ վարչութեան խօսքը ներկայացուց ատենադպիր եղբ. Պօղոս Գպրըճբեան: Ան պարզեց մասնաճիւղին ընթացիկ տարուան մարզական յաջողութիւնները եւ սկստական գլխաւոր իրազօրժումները:



Այս առիթով կիրարկուեցաւ բաւական ճոխ յայտագիր: Գայլիկ-արծուիկներ եւ մրջնիկներ ներայացուցին զըլարճալի խաղեր, երգեր ու արտասանութիւններ: Արի արենոյշներ եւ երէց պարմանուհիներ կազմեցին բուրգեր՝ արժանանալով ներկաներու բուռն ծափահարութիւններուն:

Այնուհետեւ ընթացք առին մարզախաղերը՝ վոլիպոլ եւ պասքեթպոլ, մաս-







նակցութեամբ Հաւրէզքի, Պասրայի, Քէրքուկի մարզիկ-մարզիկուհիներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի մասնաճիւղի քոյր-եղբայրներու:

Մարզախաղերու առաջին հանգրուանը եզրափակուեցաւ հայկական չորս հարստութիւններու նուիրուած սկաուտական շքերթով: Ներկայացուեցաւ նաեւ «Հինգերորդ հարստութիւնը»՝ Հ.Մ.Ը.Մ-ը, աշխարհասփիւռ իր 100 մասնաճիւղերով:

Շքերթը մեծ ոգեւորութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:

Պաղտատի մասնաճիւղի վարչութիւնը յուշանուէրներ փոխանցեց հիւր պատուիրակութիւններուն եւ մարզահանդէսը փակուեցաւ «Մեր հայրենիք»ով:

Մարզահանդէսէն ետք, ի պատիւ հիւրերուն տեղի ունեցաւ ընտանեկան հաւաքոյթ:

Յաջորդ օրը, առաւօտուն, տեղի ունեցաւ պատուիրակութիւններու ներկայացուցիչներու եւ մարզիչներու հանդիպումը Պաղտատի մասնաճիւղի վարչութեան հետ: Ատենապետ եղբ. Վահէ Միհրանեան հանդիպումին ներկայացուց մարզախաղերու կանոնադրութիւնը եւ յայտագիրը: Մարզախաղերը ընդգրկեցին հետեւեալները-

- Պասքեթպոլ- տղաք:
- Ֆուտբոլ- տղաք:





- Փինկ-փոնկ- տղաք:
- Թենիս- տղաք եւ աղջիկներ:
- Պատմինթրն- տղաք եւ աղջիկներ:
- Ճատրակ- տղաք եւ աղջիկներ:
- Վոլիպոլ- տղաք եւ աղջիկներ:

Մարզախաղերուն նպատակը, անշուշտ, մետալներ շահիլը չէր, այլ՝ Իրաքի դժուարին պայմաններուն մէջ հայ երիտասարդութիւնը քով-քովի բերել հայաշունչ մթնոլորտի մէջ:

Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ մարզախաղերու փակումը, ուր կատարուեցաւ յաղթականներու մետալներու տուչութիւն: Յաջորդեց ողջերթի ընտանեկան հաւաքոյթը:

Մարզահանդէսին երրորդ օրը եղաւ ազատ օր: Հիւրերը Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան հրաւէր ստացան վայելելու իրենց լողաւազանը: Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ պարահանդէս, կազմակերպութեամբ Պաղտատի մասնաճիւղի վարչութեան:

Մարզախաղերը աւարտեցան բարձր տրամադրութիւններով, ազգային ոգեւորութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ական խանդավառութեան լաւագոյն զգացումները սփռվելով Պաղտատի գաղութին եւ իրաքահայ մնացեալ շրջաններու հիւր պատուիրակութիւններուն մօտ:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 31ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտ Զեչիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Հ**ՄԸՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան գրասենեակէն կը տեղեկացնեն, թէ նորընտիր Շրջանային Վարչութիւնը իր դիւանը ընտրած է հետեւեալ ձեւով. - Գառնիկ Աբրահամեան՝ ատենապետ, Փիէր Մանուկեան՝ փոխ ատենապետ, Բաֆֆի Ցնծարեան՝ ատենադպիր, Ռիմա Արեղի-Մաղրեան՝ գանձապահ, Խորհրդակալներ՝ Նորա Չափարեան, Թովմաս Տէօքմէճեան, Վիգէն Տազսեան, Ալէք Արարատեան եւ Շահիկ Աղաբաբեան:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի 19րդ Շրջանային Վարչութիւնը ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 31րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին կողմէ, որ տեղի ունեցաւ 5-7 Նոյեմբեր 2010ին, առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնէն ներս, նորակառոյց «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն այս ժողովին Հ.Մ.Ը.Մ.ի 17 մասնաձիւղերէն կը մասնակցէին շուրջ 110 ընտրեալ ներկայացուցիչներ եւ 25է աւելի հրաւիրեալներ: Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան յիստորի ներկայացուցիչն էր եղբ. Վահրամ Դանիէլեան: Ժողովին ներկայ գտնուեցան նաեւ

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Յ.Դ կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, Հ.Մ.Ը.Մ.ական Յակոբ Թիւֆէնքճեան, Հ.Մ.Ը.Մ.ի բարերար տիկին Ալիս Անտոնեան եւ գաւալը՝ Հ.Մ.Ը.Մ.ական եւ անցեալի Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Հրաչ Անտոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 35րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Ճորճ Ա. Ժամկոչեան, 2010ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Պերճ Ճամճեան, անցեալի Նաւասարդեանի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ:

Բարի գալուստի խօսքերով ժողովին բացումը կատարեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Ապա, շնորհակալական ելոյթ ունեցաւ եղբ. Հրաչ Անտոնեան, որ մօր՝ Ալիսին եւ Անտոնեան գերզաստանին անուանով շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան եւ կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետին, որոնք առիթը ընծայած էին հօրը՝ Գէորգ Անտոնեանի յիշատակին անուանակոչելու կեդրոնին սրահը, ուր առաջին անգամ ըլլալով կը գումարուէր շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովը:

Այնուհետեւ եւ յաջորդական երեք օրեր, ժողովը ստացաւ բնական ընթացք:

Ատենապետներ ընտրուեցան եղբայրներ Արմէն Աբրահամեան եւ Մհեր Դաւիթեան, իսկ ատենադպիրներ՝ քոյրեր





Մարալ Մանուկեան, Սիրվա Գրիգորեան եւ Լուսի Սանոսեան:

ժողովականներու յիսգօրագիրներու ստուգումէն ետք, տեղի ունեցաւ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու ընտրութիւնը, որուն յաջորդեց քուէախոյզ, բանաձեւի եւ նախահաշիւի յանձնախումբերու կազմութիւնը: Երկու հանգրուանով կարդացուեցան ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները: Ընթերցուեցան նաեւ հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու զեկոյցները: Իսկ լուսաբանական հարց ու պատասխաններէն ետք ժողովականներուն առիթ տրուեցաւ ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան ըստ էութեան քննարկումը կատարելու: Արտայայտուող ժողովականները որոշ մատնանշումներ կատարելով հանդերձ, գնահատեցին Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը, յատկապէս սկառուտական, մարզական, դաստիարակչական եւ ռազմավարական ծրագրումի աշխատանքներէն ներս: Բացառիկ գնահատանքի արժանացաւ յատկապէս շրջանը նոր սրահով մը օժտելու իրագործումը:

Այնուհետեւ, ժողովականները յանձնախումբերու բաժնուեցան եւ քննեցին Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպչական, դաստիարակչական, մարզական, սկառուտական, Նաւասարդեան ձեռնարկները, հանրային կապը եւ բանակազարի առըն-



Զախեն Աջ եղբայրներ Վահրամ Դանիւլեան, Յակոբ Թուֆերճեան եւ Գօգօ Պալեան:



Զախեն աջ՝ Զրաչ Անտոնեան, Ալիս Անտոնեան եւ Ծորճ Ա. Ժամկոչեան:





չընող մարզերը եւ ժողովին առ ի վաւերացում ներկայացուցին իրենց առաջարկները:

Ժողովին կողմէ որդեգրուած բոլոր առաջարկներն ալ կը նպատակադրէին Հ.Մ.Ը.Մ.ի հոգածութեան յանձնուած երիտասարդութիւնը դաստիարակելու եւ անոնց առողջ միջավայր մը ապահովելու գործին, ինչպէս նաեւ՝ մասնաճիւղերը կազմակերպելու, միջ-մասնաճիւղային եւ միջ-շրջանային աշխատանքները աւելի զարգացնելու, Նաւասարդեան մարզախաղերը ընդլայնելու եւ յատկապէս՝ Հայրենիք-Սփիւռք գործունէութիւնը ընդարձակելու հրամայականը իրականացնելու գործին:

Կիրակի, 7 Նոյեմբերի յետմիջօրէին, նախքան վերջին օրակարգի իրագործումը, տեղի ունեցաւ Ամերիկեան Սկաուտութեան «Տախտակ Պէճ»ի (Wood Bedge) դասընթացներուն հետեւած եւ զանոնք յաջողութեամբ աւարտած երեք քոյր-եղ-

բայրներու համապատասխան փողկապներու յանձնումը: Արարողութիւնը գլխաւորեց դասընթացներու ընդհանուր խմբապետ եղբ. Վարուժ Միրզայեան, աջակցութեամբ նոյն դասընթացքի դասախօսական կազմի անդամ քոյր Մարօ Քէչիշեանի:

Այսպէս, ամերիկեան սկաուտութեան «Տախտակ Պէճ»ի իրենց թաշկինակը, փողկապն ու երկու տախտակները ստացան քոյր Շաքէ Գալայճեան, եղբ. Բաֆֆի Յնծալեան եւ եղբ. Վրէժ Թասլաքեան: Արարողութեան մասնակցեցան ժողովին ներկայ եւ «Տախտակ Պէճ»ի արժանացած բոլոր քոյր-եղբայրները:

Արարողութիւնը տպաւորիչ էր, ինչ որ բարձր գնահատուեցաւ ժողովականներուն կողմէ:

Այնուհետեւ, յառաջիկայ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նախահաշիւին վաւերացումէն ետք, տեղի ունեցաւ Շրջանային Վարչութեան ընտրութիւնը, որ աւարտեցաւ հետեւեալ 9 քոյր-եղբայրներու ընտրութեամբ.՝ Գառնիկ Աբրահամեան, Փիէր Մանուկեան, Ռիմա Աբեղի-Սաղրեան, Թովմաս Տէօքմէճեան, Վիգէն Տագէսեան, Ալէք Արարատեան եւ Նորա Զափարեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորական երկթ ունեցաւ եղբ. Վահրամ Դանիէլեան, որ առաջին հերթին շնորհաւորեց ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը իր գնահատելի գործունէութեան, իսկ դիւանը՝ ժողովը ձեռնահասօրէն վարե-



**Ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը ժողովի ընթացքին:**



լուն համար: Ան յաջողութիւն եւ բե-  
ղուն գործունէութիւն մաղթելով  
նորընտիր Շրջանային Վարչութեան  
ըսաւ. «Արեւմտեան Մ. Նահանգնե-  
րու այս շրջանը Հ.Մ.Ը.Մ.ի մեծա-  
գոյն շրջանն է, որ գնահատելի աշ-  
խատանք կը տանի: Կ'ըսուի պէտք է  
քայլ պահել ներկայի հետ եւ արդի  
միջոցներով հրապուրել երիտասար-  
դութիւնը: Սակայն պէտք է զգոյշ ըլ-  
լալ, որովհետեւ ձեր առջեւ կան մար-  
տահրաւէրներ, որոնք եթէ լաւապէս  
չդիմակալուին, կրնան վնաս հասցը-  
նել այս միութեան: Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը  
իր վարդապետութիւնը մէկդի գնե-  
լով միայն այսօրուան հետ քայլ պի-  
տի պահէ՝ ապա մենք շեղած կ'ըլլանք  
մեր հիմնադիրներու գծած ուղիէն:  
Մենք պէտք է լաւը քաղենք այսօր-  
ւան յառաջդիմութիւններէն: Օգ-  
տագործեցէք ներկայի լաւ միջոցնե-  
րը, միաժամանակ պաշտպանելով  
այն ինչ որ տարիներու ընթացքին  
վաստկեցիք, որպէսզի առաւել հզօրացնէք այս մեծ կազմա-  
կերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը»:



Չախէն աջ՝ եղբայրներ Ալպեր Ունճեան,  
Յակոբ Կարապետեան եւ Սամուէլ Սկրտիչեան:

Եւօրեայ նստաշրջանը վերջ գտաւ Կիրակի, 7 Նոյեմբերի  
երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ. «Յառաջ նահատակ» քայլերգով:

*Made from one single slice  
of natural Australian opal*

# Classique®

OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

*Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: www.classiquewatches.com  
Email: Info@classiquewatches.com*





# Հ.Մ.Ը.Մ.Ի «ՀԱՅԻ ՊՕՂՈՍ ԱՐԻՍ» ԽՈՏԱԾԱԾԿ ԴԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄԸ



Բազման հանդիսության ներկայ հայ թե արաբ հիւրեր:

Հ.Մ.Ը.Մ.ականներ, համակիրներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոլի նորաստեղծ դպրոցի սաներ:

Դաշտին բացումը կատարուեցաւ Լիբանանի քայլերգով, զոր նուագեց Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի շեփորահունձը: Նուագին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգին՝ «Յառաջ նահատակ»-ի ունկնդրութիւնը: Ապա, բացման ժապաւէնը հատեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ Ձէյտ Խիամէ:

## Թղթակից ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային ֆուլթայոլի յանձնախումբին կազմակերպութեամբ եւ երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ձէյտ Խիամէի հովանաւորութեամբ, Շաբաթ, 27 Նոյեմբեր 2010ի յետմիջօրէի ժամը 3.30ին բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Հայր Պօղոս Արիս» ֆուլթայոլի խոտածածկ դաշտին:

Բացման հանդիսութեան ներկաներու շարքին էին Ձէյտ Խիամէ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ

Գառնիկ Մկրտիչեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Պուրճ Համուտի, Պէյրութի եւ Այնճարի քաղաքապետական խորհուրդներու անդամներ, Փրանսախօս երկիրներու կազմակերպութեան փինկ-փոնկի ֆետերասիոնի նախագահ Միշէլ Տը Շատարեւեան, Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Ծատուրեան, փինկ-փոնկի ֆետերասիոնի նախագահ Սեյիմ Հաօ Նիքոլա, ճատրակի ֆետերասիոնի նախագահ Նեպիլ Սըննօ, ֆուլթայոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Ռահիֆ Ալամէ, մեծ թիւով

խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Սիրվա Սաղրեան: Ան ողջունեց հիւրերը՝ նշելով, որ խոտածածկ այս դաշտով Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոլի պատմութեան մէջ բացուած է նոր էջ:

«Այս դաշտը կը պատկանի նոր սերունդին, որուն մենք հոգ պիտի տանինք, որպէսզի անիկա յաղթանակներու գագաթնակէտին հասնի եւ Հ.Մ.Ը.Մ.ի փառքը վերահաստատէ», ըսաւ քոյրը:



Շարունակելով, քոյր Սաղրեան նշեց, որ առ ի երախտագիտութիւն Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաշատ նախկին ֆուլթայոլիստներու, որոնք կերտած են ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի, այլև լիբանանեան





Քոյր Սիլվա Ասղբեան  
*Ph. Raffi Berberian*



Եղբ. Սիշլի Տիք Խորոզեան



Եղբ. Յակոբ Քէշիշեան



Բացման ժապաւեճը կը հատեն Լիբանանի երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ջէյտ Խիամէ, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Ռահիֆ Ալամէ:

*Ph. Raffi Berberian*



Լիբանանի երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ջէյտ Խիամէ կ'արտասանէ իր խօսքը:

Ֆուտբոլի փառքի օրերը, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը որոշած է նորաստեղծ ֆուտբոլի դպրոցին խումբերը կոչել անոնց անունով: Այդ ֆուտբոլիստներէն են՝ Վազգէն Տէր Դուկասեան, Եղիշէ Մանուկեան, Ժողէֆ Նալպանտեան, Սարգիս Ազնաւուրեան, Սարգիս Սարգիսեան եւ Մանուէլ Ալթունեան:

Հանդիսութեան հայերէնով բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Միշլի Տիք Խորոզեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի դաշտին դռները բաց են բոլորին առջեւ անխտիր: «Այդ դաշտէն ծնունդ պիտի առնէ վաղուան մեր սպասած ֆուտբոլի խումբը՝ փայլուն

աստղերով: Հ.Մ.Ը.Մ-ի համար նպատակը տկարութիւն չի ճանչնար», հաստատեց ան:

Ապա խօսք առաւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Եղբայրը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. սկսած է վերակազմել իր շրջաններու եւ տարիքային ֆուտբոլի խումբերը, որոնց կողքին կայ նաեւ ֆուտբոլի դպրոցը, որպէսզի կարելի ըլլայ տարիքային ախտյեանութիւններ կազմակերպել եւ լաւագոյն ֆուտբոլիստները ընտրել՝ կազմելու համար ֆուտբոլի ապագայի գորաւոր խումբը:

Եղբ. Քէշիշեան շեշտեց, որ ֆուտբոլի դպրոցը եղանակային չէ, այլ՝ ան կը գործէ ամբողջ տարուան ընթացքին:

Ան մաղթեց, որ լիբանանեան բոլոր խումբերը ունենան իրենց սեփական դաշտերը եւ նոր սերունդը հեռու պահեն ընկերութեան չարիքներէն:

Եզրափակելով, եղբայրը իր խօսքը ուղղեց Լիբանանի մարզական ընտանիքին, յատկապէս՝ ֆուտբոլի պատասխանատուներուն: «Մենք հասակ նետող ծաղիկի հունտը ցանցինք եւ բոլոր փուշերը մեզի, իսկ վարդերը ձեզի թող ըլլան», ըսաւ ան եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք օժանդակեցին դաշտին շինութեան:

Իր կարգին, Ջէյտ Խիամէ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկները բազմաթիւ յաղթանակներ եւ ախտյեանութիւններ ձեռք ձգած են տեղական, արաբական





Ph.Raffi Berberian

ու ասիական առումով, իսկ երկար ժամանակ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները մաս կազմած են Լիբանանի ազգային հաւաքականին:

Խիստ է հաստատեց, որ իրեն վայել դիրքէն Հ.Մ.Ը.Մ.ի բացակայութիւնը

պատճառ դարձաւ, որ Լիբանանի մէջ Ֆութպոլի մակարդակը աստիճանաբար նահանջ արձանագրէ:

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէնը մաղթեց, որ նոր մարզա-

դաշտին բացումը նոր սկիզբ մը ըլլայ եւ նոր էջ մը բանայ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլի պատմութեան մէջ: Այս առիթով, ան իր շնորհակալութիւնները փոխանցեց միութեան պատասխանատուներուն, անդամներուն եւ մարզիկներուն:

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլի դպրոցի աշակերտները կատարեցին մարզական ցուցադրական փորձեր:

Տեղի ունեցաւ նաեւ հիւրասիրութիւն, որովհետք կատարուեցաւ յատուկ վիտէօ երիզի ցուցադրութիւն, որուն ընդմէջէն ներկայացուեցան դաշտին շինութեան տարբեր հանգրուանները:

(Լուսանկարները՝ «Photo Raffi»ի)

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia  
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand / La Terre vue du Ciel. Licence 075-960031 - StudioVCCB 2005-2005

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabodoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com





## Հ.Մ.Ը.Մ.Ը ՆՈՒԻՐՈՒՄ Է

Հ.Մ.Ը.Մ.Ը Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 28 Նոյեմբեր 2010ին, Պէյրութ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Հ.Մ.Ը.Մ.Ը բոլոր նմանակալներու հոգիներուն համար:

Աւանդութիւն դարձած հոգեհանգստեան պաշտօնին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ը Կեդրոնական Վարչութիւնը, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, մասնաձիւղերու վարչութիւնները, Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու Խմբապետական կազմը, նախկին Կեդրոնական եւ Շրջանային վարչութիւններու անդամներ, վեթերան քոյրեր եւ եղբայրներ, մարզիկներ ու սկաուտներ:

Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց ու քարոզեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան:

Իր քարոզին մէջ Առաջնորդը գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ը.ականին ծառայելու արժանիքը եւ իր ընտանիքէն աւելի մեծ ընտանիքին՝ միութեան նուիրումի երեւոյթը:

Յետ հոգեհանգստեան պաշտօնին, Առաջնորդարանի դահլիճին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ը Կեդրոնական Վարչութեան անդամներն ու Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընդունեցին ցաւակցութիւններ, որոնց ընթացքին Հ.Մ.Ը.Մ.Ը Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան արտասանեց հետեւեալ խօսքը:

**Ա**ւանդութիւն դարձուցինք ամէն տարուան Նոյեմբեր ամսուան մէջ Հ.Մ.Ը.Մ.Ը ընտանիքէն յաւատարմութեամբ մեր նահատակ եւ մահացած քոյր-եղբայրներուն յիշատակը:

տակը անմահացնել հոգեհանգստեան արարողութեամբ:

Գիտակից իր կոչումին, Հ.Մ.Ը.Մ.Ը կը յարգէ յիշատակը եւ կը գնահատէ նախորդներուն կտրած ուղին, ու անոնց կատարած անձնուէր գործերը վառ պահելով՝ կը շարունակէ իր ընթացքը, հաւատարմով ապագային, իր ներկան վերածելով նուիրումի:

Հ.Մ.Ը.Մ.Ը նուիրում է սիրելիներ, եւ մենք եկած ենք այսօր այդ նուիրեալներուն յիշատակը անմահացնելու:

Երէկ ականատես եղանք Հ.Մ.Ը.Մ.Ը Ֆուլթայոյի «Հայր Պօղոս Արիս» դաշտի բացման հանդիսութեան, հոն մենք անմահացուցինք մեր անցեալի վեթերան կարգ մը եղբայրները, որոնք տարիներու իրենց ընծայաբերումով ու քրտինքով, յաղթանակներ ու պարծանքի անզուգական պահեր ընծայեցին իբրևանահայութեան ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.Ը-ին մասնաւորապէս:

Հ.Մ.Ը.Մ.Ը Ֆուլթայոյի նոր դպրոցին հետեւող մարզիկներուն տարիքային խումբերը անուանակոչեցինք Եղիշէ Մանուկեանի, Վազգէն Տէր Ղուկասեանի, Սարգիս Ազնաւուրեանի, Սարգիս Սարգիսեանի, Ժողէֆ Նալպանտեանի եւ Մանուէլ Ալթունեանի անուններով, որոնք խումբ մըն են միայն Հ.Մ.Ը.Մ.Ը անծայրածիր անջրպետին մէջ գտնուող փայլուն ու չմարող աստղերէն:

Մեզմէ յաւատարմութեամբ նահատակ ու մահացած սիրելի քոյրեր ու եղբայրներ, որ անդենականէն այժմ կը դիտէք մեզ ու կը հետեւիք մեր աշխատանքներուն, կը խոստանանք ու կը վստահեցնենք, որ ձեր բոցավառած ջահը, զոր փոխանցեցիք մեզի, միեւնոյն կամքով ու հաւատքով պիտի փոխանցենք յաջորդող սերունդներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ը Լիբանանի ընտանիքին անունով կը խոնարհինք ձեր վսեմ յիշատակին առջև:

Խոնկ ու մոմ ձեր անթառամ յիշատակին:





# ՔՈՅՐ ԼՈՒՄԻՆ ԳԱԶԷԶԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԲԱՏՐՈՒԻ ԼԻՐԱՆԱՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՄԻՈՆԻՆ ԿՈՂՄԷ

## Թղթակից ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

**Լ**իրանանեան սկստակա կեանքին մեծ ներդրում ունեցած 25 վաստակաշատ ղեկավարու հետ, Շաբաթ, 4 Դեկտեմբեր 2010ին, Հ.Մ.-Ը.Մ.Ի Լիրանանի շրջանի երկարամեայ խմբապետուհիներէն քոյր Լուսին Գազէզեան արժանացաւ Լիրանանի սկստակա Ֆետերասիոնի պարգեւատրման:

Պարգեւատրման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Անթունիէ Գոլէճին մէջ, հովանաւորութեամբ Լիրանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ալի Ապտալյալի, կազմակերպութեամբ Լիրանանի սկստակա Ֆետերասիոնի եւ ներկայութեամբ Հ.Մ.-Ը.Մ.Ի Լիրանանի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկստակա Խորհուրդի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներուն:

Հանդիսութեան բարի գալուստի խօսքը արտասանեց օրուան հանդիսավար Նապիլ Պալտուն: Ան յայտնեց, որ պարգեւատրեալները անսակարկ նուիրումով եւ յարատեւ աշխատանքով լիրանանեան սկստակա Ֆետերասիոնի ծառայած են իրենց պատկանած միութիւններուն ընդմէջէն:

Խօսք առաւ Լիրանանի ըսկստակա Ֆետերասիոնի նախագահ Քամալ Սալիտ Ֆախրը: Ան նշեց, որ պարգեւատրումը հաւատարմութիւն ու գնահատանք է, եւ ֆետերասիոնի նախաձեռնութիւնը, իբրեւ



այդպիսին, կը ներկայանայ պարգեւատրելու առաջնակարգ խմբապետները՝ վաղուան Լիրանանին եւ յուսալից ապագայի նկատմամբ իրենց տարած աշխատանքին համար:

Յաջորդեց մետալներու եւ վկայագիրներու բաշխումը:

Այնուհետեւ, պարգեւատրեալներուն անունով խօսք առաւ Իսամ Ապու

Շաբրա, որ անդրադարձաւ սկստակա պարտականութեան եւ տարած աշխատանքին՝ հաստատելով, որ սկստակա միշտ եղած է անկեղծ իր խօսքերով եւ հաւատարիմ՝ իր գործով:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ալի Ապտալյա: Ան ըսաւ, որ սկստակաութիւնը կազմակերպուած միութիւն մըն է, որ իր ազդեցութիւնը ունի հաւաքական մեր կեանքին մէջ՝ իր մանկութենէն դաստիարակելով անհատը: Ան հաստատեց, որ սկստակաութիւնը ամէնէն վեհանձն գոհողութեան գործն է, գոր մարդ կրնայ ընել իր հայրենիքին նրկատմամբ եւ սերունդներ դաստիարակելու գործին մէջ:





## ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԷՑ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻ ՃԻՒՂԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐՇԱՒ-ԲԱՆԱԿՈՒՄԸ

**Շ**արաթ, 4 եւ Կիրակի, 5 Դեկտեմբեր 2010ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Խմբապետութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ երէց-պարմանուհի ճիւղերու միջ-մասնաճիւղային երկօրեայ արշաւ-բանակումը, գլխաւորութեամբ Շրջանային երէց ճիւղի խմբապետ եղբ. Շանթ Տէմիրճեանի:

Այս արշաւին նպատակն էր մասնակցողներուն մօտ դարձնել սկաուտական չարքաշուքեան եւ մրցակցութեան ոգին, ինչպէս նաեւ՝ առիթ տալ բնութեան մէջ իրազործելու իրենց սորված գիտելիքները:

Երկօրեայ արշաւ-բանակումին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի եւ ժրտէյտէի մասնաճիւղերէն 35 քոյրեր եւ եղբայրներ:

Երէցներն ու պարմանուհիները Լաքլուքի շրջանէն քարելով անցան Պալապի շրջանը: Երեկոյեան, Պալապի մէջ անոնք լարեցին իրենց վրանները, ընթրեցին, ապա կատարեցին աւանդական խարուկահանգէսը, որուն ընթացքին անդրադարձան արշաւի ընթացքին իրենց ունեցած արկածախնդրութիւններուն:

Առաւօտեան կանուխ ժամերուն, բոլորը շարունակեցին իրենց արշաւը դէպի Թանուրին Ֆաուքա. ճամբու ընթացքին մասնակցողները օգտագործեցին իրենց սորված քարտիսագիտութիւնը եւ գործնականորէն կիրարկեցին ձի. Փի. Էս.ի գործադրութիւնը:

Կիրակի, յետմիջօրէին ժամը 3.45ին, երէցներն ու պարմանուհիները թէեւ յոգնած, բայց խանդավառ ու գոհունակ վերադարձան իրենց ակումբները:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

*Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.*

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com





# Հ.Ա.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՀՐԶԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 18ՐԴ ԺՈՂՈՎՐ

## Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԵՊ

**Հ**Ա.Ը.Մ.Ի Սուրիոյ շրջանի ներկայացուցչական 18րդ ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 7 Նոյեմբեր 2010ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Անի» ճաշարահէն ներս: Ժողովին պատուոյ հիւրը դարձաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Ներկաներու շարքին էին Հ.Ա.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Միհրան Երմշիրեան, Ազգային Քաղաքական Ժողովի անդամներ, Շրջանային Սկսուած Խորհուրդի, Խմբապետութեան եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներ:

Ժողովը բացուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Րաֆֆի Տէր Աբրահամեան բարի գալուստի խօսքէ ետք ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լուծեամբ յարգելու միութենէն յաւանտեցան հին ու նոր ննջեցեալներու եւ ի մասնաւորի Շրջանային Վարչութեան նոր մահացած անդամ եղբ. Մկրտիչ Գրիգորեանի յիշատակը: Ապա, ան փոխանցեց Շրջանային Վարչութեան խօսքը:

Եղբայր ատենապետը իր խօսքը սկսաւ՝ ըսելով. «Ամենայն անկեղծութեամբ կու գամ յայտարարելու, որ ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը իր կարելիութեան սահմաններուն մէջ աշխատեցաւ բժախնդրութեամբ. թէ որքանով յաջողեցաւ իր առաքելութեան մէջ, այդ մէկը դո՛ւք է որ պիտի արժեւորէք: Այսօր դուք կոչուած էք Հ.Ա.Ը.Մ.ականի բարձր գի-

տակցութեամբ, ձեր շինիչ քննարկումներով ու առաջարկներով սատար կանգնիլ ժողովի յաջողութեան»:

Օրակարգին անցնելով, ժողովը իր դիւանը ընտրեց հետեւեալ ձեւով.՝ եղբ. Նշան Օղիկեան՝ ատենապետ, քոյրեր Ալին Գաբրիէլեան եւ Մարիա Գաբուշեան ատենադպրուհիներ: Այնուհետեւ, ընտրուեցան բանաձեւի, հաշուեքննիչ, քուէախոյզ եւ արխիւային յանձնախումբերու անդամները, որոնք ժողովի աւարտին ներկայացուցին իրենց զեկոյցները:

Ապա, ժողովը լսեց ներկայ մասնաճիւղերու գործունէութիւններու ամփոփ տեղեկագիրները, ուր մասնաճիւղերը ներկայացուցին իրենց կատարած աշխատանքները, ազգային եւ զանազան տօնական առիթներու մասնակցութիւնները: Տեղեկագիրները անդրադարձան նաեւ մասնաճիւղերու դիմազրաւած դժուարութիւններուն:

Կէսօրին, ժողովականները հիւընկալեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանը:

Սրբազան Հօր ներկայութեամբ, ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթարարական տեղեկագիրը ընթերցեց քոյր Ալին Քիւրիւմյեան, որմէ ետք ժողովի ատենապետ եղբ. Նշան Օղիկեան հրաւիրեց Սրբազան Հայրը՝ փոխանցելու հայրական իր օրհնութիւնը:

Այս առիթիւ իր արտասանած խօսքին մէջ, Առաջնորդը ըսաւ. «Աշխարհի տարածքին կը տեսնենք թէ գոյութիւն ունի քոյրերու եւ եղբայրներու հսկայ բանակ մը, որ դաստիարակուած է Հ.Ա.Ը.Մ.ի գաղափարականով. ան իր ծառայութիւնը կը բերէ հայկական Սփիւռքի եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքին: Եւ դուք, որպէս Հ.Ա.Ը.Մ.ական պատասխանատուներ, այսօր եկած էք քննարկելու կատարուած աշ-



խատանքները, արժեքները զանոնք եւ գալիք երկամեակին համար ճշդելու այն ուղեգիծը, որ կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական սկզբունքներուն վրայ»:

Շարունակելով, Սրբազանը իր խօսքը փակեց ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ի նշանին վրայ գետեղուած թեւերը, որոնց վրայ արձանագրուած է «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը, համահասարակ են: Բարձրանալ կը նշանակէ բարձրացնել, եւ բարձրանալ միայն բարձրացնելով: Բարձրանալ միայն բարձրացնելով կը նշանակէ անձ մը իր նմանին, իր քրոջ, իր եղբոր, գործընկերոջ նայի հաւասարութեամբ: Եւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան մէջ սահմանուած «Բարձրացիր-բարձրացուր» կը նշանակէ, թէ երբ պիտի բարձրանամ՝ ինձի հետ համահասարակ պիտի բարձրացնեմ եղբայրս»: Սրբազան Հայրը շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի 18րդ ներկայացուցչական ժողովը, մաղթելով անվախ, արի, առոյգ եւ ժողովուրդին ծառայելու գիտակցութեամբ նոր երկամեակ մը:

Յաջորդեց կարճ դադար մը, որմէ ետք ժողովականները ընթացաւարտ Շրջանային Վարչութեան տեղեկագիրին շուրջ քննարկում եւ լուսարանական հարցումներ կատարեցին եւ Շրջանային Վարչութեան 2008-2010 երկամեակը «Յոյժ գնահատելի» նկատեցին: Ժողովը շարունակելով իր օրակարգի կէտերը, խօսեցաւ Հայէպի Հ.Մ.Ը.Մ.ի մարզականին մասին: Ներկայացուցեցաւ մինչեւ օրս կատարուած աշխատանքներուն ամփոփ տեղեկագրութիւնը եւ փոխանցուեցաւ յառաջիկային տեղի ունենալիք շինարարական աշխատանքներուն ընդհանուր ընթացքը: Ժողովի ընթացքին «Մարզիկ» պարբերաթերթը նաեւ ունեցաւ իր յատուկ օրակարգը: Այլ կէտով մը, ժողովականները մասնաճիւղերու աշխատանքներն ու գործունէութիւնները աւելի յաջող ձեւով կատարելու համար ներկայացուցին իրենց առաջարկները:

Հուսկ, տեղի ունեցաւ 2010-2012 երկամեակի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւնը:

Ընտրութեանէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Միհրան Շիմշիրեան: Ան իր խօսքը սկսաւ շնորհաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Շրջանային Վարչութիւնը, ինչպէս նաեւ բարձր գնահատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան տարած աշխատանքները: Եղբ. Շիմշիրեան նորընտիր Շրջանային Վարչութեան յառաջիկայ աշխատանքներուն համար ըսաւ. «Նորընտիր Շրջանային Վարչութեան կը սպասէ հսկայ աշխատանք: Մեր միութեան նպատակը հիմնուած օրէն եղած է երիտասարդութիւնն ու պատանիները դաստիարակել հայեցի դաստիարակութեամբ, որուն միջոցը եղած է սկաւտութիւնն ու մարզանքը: Այսօր մենք յաւելեալ ճիգ պէտք է տրամադրենք, որպէսզի կարենանք պահել նոր սերունդը. հսկայ աշխատանք պէտք է տանինք պայքարելու համաշխարհայնացումի վտանգներուն դէմ»: Եղբ. Շիմշիրեան իր խօսքին աւարտին մաղթեց նորա-նոր յաջողութիւններ եւ յաղթանակներ:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Ժողովին յաջորդեց նորընտիր Շրջանային Վարչութեան անդրանիկ նիստը, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբոր եւ ժողովի ղեկանին: Նորընտիր կազմը իր աշխատանքներուն բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.- եղբ. Վիգէն Գապագեան՝ ատենապետ, քոյր Ալին Քիւրիմլեան՝ ատենադպրոճհի, եղբ. Արտո Փայասեան՝ գանձապահ, եղբայրներ Լեւոն Իսկէնտէրեան, Յարութ Խաչատուրեան, Բաֆֆի Յակոբեան, Հարո Տէիրմէնճեան, Յակոբ Պարսումեան եւ Սարգիս Պասմաճեան՝ խորհրդականներ:

# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽԱՄԱՆ ԴԱՇՏԱՀԱՆՐԷՍ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

## Բաֆֆի Սիւլահեան ՅԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի ընկառուած. Խորհուրդին եւ խմբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 31 Հոկտեմբեր 2010ին, Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզի պասքէթի դաշտին մէջ տեղի ունեցաւ սկաւտական փոխանցման արարողութիւն եւ «Նորագիր» կարգի վկայականաց բաշխումի դաշտահանդէս:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ







Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներն ու խմբապետութիւնը, Հայկի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկաուտ. Խորհուրդը, ինչպէս նաեւ մեծ թիւով ծնողներ եւ Հ.Մ.-Ը.Մ.ականներ:

Հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա բացման խօսքը կատարեց «Գրիգոր Յակոբեան» արի միաւորի փոխ խմբապետ եղբ. Մանօ Գայեմճեան:

Եղբայր բարի գալուստի խօսքերէ ետք ըսաւ, որ գայլիկներն ու արծուիկները իրենց փոքր տարիքին, ծնողներու քաջալերանքով կ'անդամակցին միութեան, ուր իրենց նմաններուն հետ խաղի կը տարուին ու կեանքի հորովոյթին հետ խաղէն կ'անցնին դաստիարակչական եւ սկաուտական աշխատանքներու: Օրեր, ամիսներ եւ տարիներ անցնելով, գայլիկը կը դառնայ արի, երէց, ապա՝ խմբապետ, անսակարկ ծառան դառնալով Հ.Մ.-Ը.Մ.ինչնաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ին:

Օրուան գեղարուեստական յայտագիրը սկսաւ «Շաւարշ Քրիսեան» գայլիկ եւ արծուիկ միաւորներու կողմէ պատրաստուած բացման արարողութեամբ, որուն յաջորդեցին արի միաւորի եղբայրներու ու թիմիկ եւ արենոյ միաւորի քոյրերու գլանով մարզանքները:

«Գրիգոր Յակոբեան» գայլիկ եւ արծուիկ միաւորներու քոյրերն ու եղբայրները ներկայացուցին սկաուտական բուրգ մը, ինչպէս նաեւ՝ հայկական զոյգ պարեր:

«Շաւարշ Քրիսեան» գայլիկ եւ արծուիկ միաւորներէն ութ քոյրեր եւ եղբայրներ ներկայացուցին Սիւպիլի «Հայ լեզուին» բանաստեղծութիւնը՝ խմբային ասմունքով մը, որմէ ետք «Գրիգոր Յակոբեան» միաւորի արի եւ արենոյ միաւորները ներկայացուցին սկաուտական կարգապահական վարժութիւն մը:

Գեղարուեստական յայտագրին եզրափակիչ մասը դարձաւ գաւեշտը, որուն նիւթը կը ներկայացնէր ծնողք-միութիւն յարաբերութիւնը:

Նախքան փոխանցման արարողութիւնը, Հ.Մ.-Ը.Մ.ի Հայկի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի եւ խմբապետութեան խօսքը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ օրուան խորհուրդին՝ ըսելով. «Այսօր մեր քոյրերն ու եղբայրները փորձեցին ձեզի ներկայացնել իրենց գործունէութիւններէն ծաղկեփունջ մը, որուն աւարտին ականատես պիտի դառնաք գայլիկ եւ արծուիկ միաւորներէն ղէպի արիական եւ արենուչական շարքեր անցնողներու, ինչպէս նաեւ՝ արիական շարքերը ամբողջացնող եւ աստիճանաւոր դառնալու պատրաստուող քոյր-եղբայրներու խոստման արարողութեան: Զոյգ արարողութիւններուն մէջ հիմնական երեւոյթ է, որ մեր քոյրերն ու եղբայրները միշտ արձանագրած են վերելք, տարիներ շարունակ դաստիարակչական ծրագիրներուն եւ սկաուտական աշխատանքներուն մէջ յաջողած են թեւակոխել նոր հանգրուան»:

Եղբայրը իր խօսքին աւարտին անդրադարձաւ նաեւ ծը-







նողք-միութիւն համագործակցութեան անհրաժեշտութեան, որ կրկնակի պատասխանատուութեան առջեւ կը դնէ բոլորը:

Հասած էր օրուան ամէնէն խորհրդաւոր՝ փոխանցման արարողութեան պահը: Մասնաճիւղի խմբապետը հրաւիրեց Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Բաֆֆի Փալանճեանը՝ հովանաւորելու համար փոխանցման եւ վկայականաց բաշխման արարողութիւնները:

Գայլիկ եւ արծուիկ չորս միաւորները անջատաբար շրջանակներ կազմելով կատարեցին իրենց վերջին մեծ կանչը, որ մէ ետք միաւորներու պատասխանատուներ՝ եղբ. Բաֆֆի Սիլվահեան («Գրիգոր Յակոբեան» գայլիկ), քոյր Սեւան Պազարճեան («Գրիգոր Յակոբեան» արծուիկ), եղբ. Ալեքսան Գուլումճեան («Շաւարշ Քրիսեան» գայլիկ) եւ քոյր Ֆլորա Փոստայեան («Շաւարշ Քրիսեան» արծուիկ) փոխանցեցին իրենց սրտի խօսքերն ու բարեմաղթութիւնները:

Գայլիկական խոստումը վերանորոգելէ ետք, շրջանակները բանալով, պարան ցատկելով գայլիկներն ու արծուիկները յառաջացան դէպի սկաուտական շարքեր, ուր դիմաւորուեցան սկաուտներու եւ պատասխանատուներու կողմէ: Իրենց կարգին, արիական շարքերը ամբողջացնող քոյրերն ու եղբայրները միացան աստիճանաւորական խումբին: Փոխանցման արարողութեանէն ետք, քոյրերն ու եղբայրները յաջողութեամբ անցընելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի «Նորագիր» կարգի քննութիւնը, կատարեցին սկաուտական խոստում եւ ստացան «Նո-



«Նորագիր» կարգի վկայական եւ սկաուտական փողկապ: Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏՄԱՅԻ ՇՐՋԱՆԻ 40ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

## Գրիգոր Դերձակեան ՄՈՆԹՐԵԱԼ

Ն ա խ ա ճ ե ո ն ու թ ե ա մ ր Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային «Լարչութեան եւ կազմակերպութեամբ» Հ.Մ.Ը.Մ.-կամբ» Մոնթրէալի մասնաճիւղի վարչութեան, շրջանի 40րդ մարզական խաղերը տեղի ունեցան Մոնթրէալի մէջ, 26-28 Նոյեմբերին եւ պսակուեցան աննախընթաց յաջողութեամբ: Խաղերը վայելեցին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեանի հովանաւորութիւնը:

Երեք օրերու վրայ երկարող այս խաղերուն մասնակցեցան աւելի քան 400

մարզիկներ՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Շրջանէն (Փրովիտորնս, Նիւ Եորք), Արեւմտեան Շրջանէն (Օրէնճ Քաունթի) Գանատայի շրջանէն՝ Համիլթըն, Թորոնթօ, Գէմպրիճ եւ անշուշտ Մոնթրէալի խումբերը:

Մրցաշարքի չորս մարզախաղերն էին պասքեթպոլ (13 խումբ), Ֆլոր հաքի (4 խումբ), Ֆոլթպոլ (19 խումբ) եւ փինկ-փոնկ (3 խումբ):

Խաղերը տեղի ունեցան Լաւալի «Multisport», Մոնթրէալի «Vanier College»-ի եւ Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի «Հաճէթեան» մարզադաշտերուն մէջ:

Խաղերուն առաջին օրը, երեկոյեան, մարզիկները խանդավառ մթնոլորտի մէջ հաւաքուեցան «Moomba» ճաշարանը եւ միասնաբար անցուցին հաճելի ե-

րեկոյ մը:

Յաջորդ օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ պաշտօնական պարահանդէսը՝ Լաւալի «Palace» հիւրասրահէն ներս, ուր աւելի քան 1100 Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր, եղբայրներ եւ համակիրներ իրենց ներկայութեամբ եկան փաստելու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կարեւորութիւնը: Կարժէ յիշել, որ այս աննախընթաց պարահանդէսին տոմսերը արդէն սպառած էին թուականէն ամիս մը առաջ: Ժողովրդային երգիչ Փօլ Պաղտատեան իր երգերով ներկաներուն ընծայեց անմոռանալի գիշեր մը:

Կիրակի առաւօտեան, աւարտական վերջին խաղերուն զուգահեռ, տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն-քոթթէյլ մը՝ ի պատիւ շրջաններու եւ մասնաճիւղերու ներկայացուցիչնե-





Քոյր Սօսի Տայեան



Եղբ. Սոսիկ Թոփուզեան



Եղբ. Արմէն Կէտիկեան

րուն, ներկայութեամբ Ժանի Ֆուրնիէի (Քէպէքի արդարութեան նախարար եւ երեսփոխան), Սթեֆան Տիոնի (դաշնակցային ազատական երեսփոխան), Ալէն Սուզայի (Աէն Լորէնի քաղաքապետ), Յարութ Շիթիկեանի (Պորտո-Պարթիէր-Վիլի քաղաքապետական խորհրդական): Ներկայ էին նաեւ քաղաքագէտ Նուշիկ էլոյեան եւ սկաուտական պաշտօնական ղեկավար, ինչպէս նաեւ՝ Մոնթրէլի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներ: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեան անդամներու կողքին ներկայ էին նաեւ Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու նախկին անդամներ, ինչպէս նաեւ քոյր

միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Կիրակի, 28 Նոյեմբերի կէսօրին, տեղի ունեցաւ խաղերու փակման հանդիսութիւնը «Հաճէթեան» մարզադաշտին մէջ: Մոնթրէլի մասնաճիւղի սկաուտական կազմերէն ետք, դաշտ մուտք գործեցին բոլոր մարզիկները, հարիւրաւոր համակիրներու ներկայութեամբ: Ամերիկեան, գանատական եւ հայկական քայլերգները կատարեց եղբ. Սեւան Աբանեան: Ապա, խօսքեր արտասանեցին քոյր Սօսի Տայեան («Հ.Մ.Ը.Մ. Կամբ»ի Մոնթրէլի մասնաճիւղի ատենապետուհի), եղբ. Մոսիկ Թոփուզ-

եան (Շրջանային Վարչութեան ատենապետ) եւ եղբ. Արմէն Կէտիկեան (Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ): Այս առիթով մասնաւոր պատիւի արժանացաւ Մոնթրէլի մասնաճիւղէն եղբ. Տիգրան Մեղքոնեան, միութենական իր երկարամեայ ծառայութեան եւ մանաւանդ՝ շրջանի խաղերուն բերած իր նպաստին համար: Եղբ. Մեղքոնեանին յանձնուեցաւ երախտագիտական յատուկ յուշատախտակ մը, ձեռամբ եղբ. Մոսիկ Թոփուզեանի: Համազգայինի «Անի» պարախումբը ներկայացուց հայկական երկու պար՝ ի մեծ խանդավառութիւն ներկաներուն:



Հուսկ, տեղի ունեցաւ յաղթական, առաջին եւ երկրորդ դիրքերու արժանացած խումբերու բաժակներու եւ մետալներու տուչութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 40րդ մարզական խաղերու յաջողութեամբ պսակումը անգամ մը եւս կը փաստէ, որ մարզիկ, սկաուտ, մարզիչ, վարիչ թէ՛ համակիր՝ բոլորս կը ձգտինք բարձր պահել մեր միութենական սկզբունքներն ու ոգին, հայրենի ապրելու եւ հայկականութեամբ դաստիարակելու ապագայ սերունդը եւ մանաւանդ ի գործ դնելու մեր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր բարձրացու՛ր»ը:

**ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ**





**ՓԻՆԿ-ՓՈՆԿ**

1. Հայկ Խուպեսէրեան
2. Կարպիս Կարապետեան

**ՃԼՈՐ ՀԱՔԻ**

**Կրտսեր տղաք**

1. Մոնթրէալ
2. Թորոնթօ

**Երէջ տղաք**

1. Մոնթրէալ
2. Թորոնթօ

**ՅՈՒԹՊՈՂ**

**Վեթերան տղաք**

1. Մոնթրէալ
2. Գէմպրիճ

**Երէջ տղաք**

1. Թորոնթօ
2. Մոնթրէալ

**Կրտսեր տղաք**

1. Մոնթրէալ (2)
2. Մոնթրէալ (1)

**Մ9 Փոքր տղաք**

1. Մոնթրէալ
2. Գէմպրիճ

**Մ12 Փոքր տղաք**

1. Գէմպրիճ
2. Թորոնթօ

**Երէջ աղջիկներ**

1. Մոնթրէալ

**2. Թորոնթօ**

**ՊԱՏԻՐՊՈՂ**

**Վեթերան տղաք**

1. Համիլթըն
2. Մոնթրէալ

**Երէջ տղաք**

1. Օրէնճ Քաունթի
2. Փրովիտըն

**Կրտսեր տղաք**

1. Թորոնթօ
2. Նիւ Եորք

**Փոքր տղաք**

1. Մոնթրէալ
2. Թորոնթօ

**ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ...**

**(Շարունակուած 15րդ էջէն)**

«Միրելի աշխատակից եղբայրներ, ես իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ ձեզի, որ տարի մը ամբողջ գոհաբերուելով ոգի ի բռին աշխատեցաք բարձրացնելու մեզի վստահուած այս միութիւնը: Մենք գոհ եւ ուրախ տրամադրութեամբ կը լրացնենք մեր գործը եւ կը յուսանք որ յաջորդող վարչութիւնը ա՛լ աւելի գիտակից եւ անձնուէր պիտի աշխատի քալել եւ յարատեւել Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակին ցոյց տուած ուղիով»:

Օգոստոս Տին գումարուած ընդհանուր անդամական ժողովէն ընտրուած չորս հոգին, իրենց բանաւոր պատճառներով կը հրաժարին, որով հարկ կը տեսնուի 22 Օգոստոս 1927ին, կրկնել ընդհանուր անդամական ժողովը, որմէ կ'ընտրուին Լուտեր Մասպանաճեան, Կոպեռնիկ Մանսուրեան, Միհրան Կարապետեան, Զարեհ Պատիկեան, Փիլիպոս Դերձակեան, Կարապետ Փօլատեան եւ Մաթոս Մանուկեան:

Նոր վարչութիւնը եռանդագին գործի ձեռնարկելով, կը հետեւի Հ.Մ.Ը.Մ-ի գոյութիւնը արդարացնող բոլոր ճիւղերուն եւ ենթամարմիններուն աշխատանքներուն: Սկստուական եւ ֆոլթպոլի յանձնախումբերը կը վերահաստատէ:

(Շար. 21)

**ՍՏԱՑԱՆՔ**

**«ՓԹԻԹ»**

Մ ա ն կ ա պ ա տ ա ն ե կ ա ն  
պարբերաթերթ, թիւ 0 եւ թիւ 1:

Խմբագրական կազմ՝ Վեր-  
ժին եւ Կարօ Աբրահամ-  
եաններ:



**Պատրաստե՛ց՝  
Շաղիկ Գեորգեան  
ՊԷՅՐՈՒԹ**

**Ե**րբեմն շատեր կ'ըսեն, թէ Կաղանդ Պապա չկայ, եւ անիկա յօրինուած կերպար է: Բայց ատիկա ճիշդ չէ: Կաղանդ Պապան իրականին մէջ գոյութիւն ունի եւ անիկա պատմական անձ մըն է: Ան ապրած է չորրորդ դարուն եւ կոչուած է Նիկողայոս Հրաշագործ: Իր ժամանակին, ան Փոքր Ասիոյ մէջ հրաշքներ գործած է: Զայն կոչած են Սուրբ Նիկողայոս:

Ժամանակի ընթացքին, այս մարդուն անուան շուրջ կը սկսին հիւսուիլ առասպելներ եւ կախարդական հէքիաթներ, որոնց իբրեւ արդիւնք կը ծնի բարի պապուկի կերպարը, որ կ'ուրախացնէ եւ նուէրներ կը բաժնէ փոքրիկներուն:

Հայր-ձիւն, Շէն Տան Լաոթէն, Սանթա Քլաուս, Փափա Նոէլ, Միկալաուս, Եռուլուբուկի, Կաղանդ Պապա-ասա անոր բազմաթիւ անուններէն փոքր մաս մը միայն... :

Լապլանտիոյ մէջ Կաղանդ Պապան բնակութիւն հաստատած է արդէն քանի մը հարիւր տարի առաջ: Հոն ե՛ւ ձմեռ կայ, ե՛ւ գարուն, ե՛ւ ամառ, ե՛ւ աշուն: Բայց կայ



**Ո՞Վ է  
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ**

նաեւ չափազանց խորհրդաւոր եղանակ մը, որ կը սկսի Դեկտեմբեր եւ Յունուար ամիսներու ընթացքին: Այս եղանակը ընդունուած է անուանել Կաամոս, անիկա յաւերժական գիշերուան արքայութիւնն է: Լապլանտիոյ բնութիւնը վայրի է, բայց միեւնոյն ժամանակ շատ բարեհամբոյր, ձիւնի շրջուցիչ ճերմակութիւն, հիւսիսափայլի անկրկնելի գեղեցկութիւն ունեցող առկայծումներ: Ահա այս հէքիաթային աշխարհին մէջ կ'ապրի Կաղանդ Պապան:







# ՏՕՆԱԾԱՌԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

**Ե**ւրոպայի մէջ, նախքան սոնածառի գործածութիւնը, Նոր Տարուան նախօրեակին կը զարդարէին բուրգի նման շինուած տուփիկներ, բուսականութեամբ եւ այլ պաճուճանքներով: Բուրգին հարթակներուն վրայ մարդիկ կը դասաւորէին նուէրներ եւ քաղցրաւենիք: Մինչեւ սոնածառի գործածութիւնը, բուրգը Գերմանիոյ եւ հիւսիսային Եւրոպայի մէջ կը նկատուէր Մննդեան տօներու գլխաւոր խորհրդանիշն ու զարդարանքը:



Տօնածառի մասին առաջին գրաւոր տեղեկութեան կը հանդիպինք 16րդ դարուն: Այսպէս, 1561 թուականին գրուած գերմանական աղբիւրներու մէջ կ'ըսուի, թէ Մննդեան տօնի ժամանակ տան մէջ պէտք է ըլլայ նուագադոյնը սօնածառ մը:

17րդ դարուն, սօնածառը արդէն Մննդեան տօներու համատարած խորհրդանիշն էր Գերմանիոյ եւ սկանտինաւեան երկիրներու մէջ: Չայն Ամերիկա տարած են գերմանացիները եւ անկախութեան համար մղուող պատերազմին մասնակից վարձկանները: Գերմանիոյ մեջ սօնածառը կը զարդարէին տարբեր արձանիկներով, գունաւոր թուղթերէ կտրատուած ծաղիկներով, խնձորներով, քաղցրեղէնով եւ այլն:

Ընդհանրապէս, սօնածառը զարդարելու աւանդութիւնը կապուած է խնձորներով ծանրաբեռնուած դրախտային ծառի պատմութեան հետ: Առաջին անգամ Մարթին Լուտերը մտայղացած է մօմեր վառել սօնածառին վրայ, իսկ զանոնք ելեկտրական լոյսերով փոխարինելու գաղափարը կը պատկանի անգլիացի հեռախօսավար Ռալֆ Մորիսին: Փողոցներու մէջ առաջին անգամ սօնածառ զարդարուած է Ֆինլանտայի մէջ, 1906 թուականին:




Քանի որ առաջին սօնածառները զարդարուած են թարմ ծաղիկներով եւ միրգերով, իսկ յետոյ նաեւ՝ քաղցրեղէնով, ընկոյզով եւ մօմերով, բնականաբար ատիկա բաւական ծանր եղած է սովորական ծառի մը համար: Այդ պատճառով գերմանացի ապակեգործները սկսած են արտադրել ապակեայ խաղալիքներ, որ պէսզի փոխարինեն սօնածառին բնական զարդարանքները:





## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիզեան

## ՍՈՏՈՒՔՈՒ

	5			2			8	
1	2		9		3		4	7
		9		4		2		
	7		8	6				3
3		8				6		9
	4			9	1			2
		1		5		3		
8	6		2		4		9	5
	3			1				7

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 բառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր բառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 բառակուսինոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակուսիներուն մէջ գետեղուած են:

### Նախորդին լուծումը


6	2	3	9	8	4	5	1	7
4	9	5	1	3	7	2	8	6
1	8	7	6	2	5	3	9	4
2	5	4	8	9	1	6	7	3
8	7	6	3	4	2	9	5	1
3	1	9	7	5	6	8	4	2
7	4	2	5	6	9	1	3	8
5	3	1	2	7	8	4	6	9
9	6	8	4	1	3	7	2	5

Պատասխանը՝ յաջորդիւ



### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Ֆորմիլա 1»ի գերմանացի մրցավարորդ:
- Արաբական մայրաքաղաք - Ասեղնակարով լեցուած կտաւ - Անհատ:
- Կանթեղ - Օդի խառնակութիւն - Յուցական ածական:
- Ուտեստեղէն ծախող:
- Մուռ - Ձեռքի մաս - Ասպականի:
- Յատկութիւն - Իշխանութենէ հեռացնեն:
- Անգուման, անակնկալ - Անտերունչ:
- Կրկնուած բազաձայններ - Անսահման:
- Շաղկապ - Ջերմոց, բուսարան:
- Այբուբենէն - Արգելական - Ստորին:
- Իւրացու՛ւր - Քի Մուկի նախորդը:
- Արաբական ոստան - Արական օտար անուն - Կրկին:
- Յորդանոս - Կիներ:
- Անգլիացի ֆուլթալիստ:
- 1955ի լաւագոյն ֆիլմի Օսքարին արժանացած ժապաւէնը - Չայնանիչ - Հեկեկան:
- Տառի մը դրացիները - Յեսանել - Եռանդ:
- Սողոմի բախտակից քաղաքներէն - Իգական օտար անուն - Սարսափ:
- Թուրքիոյ քաղաքներէն (հակ.) - Յովհաննէս Շիրազի երկերէն:
- Ատեան - Բերան փոթոթող համ:
- Հրապարակաւ - Խուզարկու - Յուրտ կլիմաներու գազան:



### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Ս. Փարաճանովի ֆիլմերէն - Ածականակերտ մասնիկ - Արաբական մայրաքաղաք:
- Կրկնուած ձայնաւորներ - Ճոպան - Յուզուած - Անդադար:
- Հայաստանի քաղաքներէն - Չայնակից գիրեր - Մունջ - Չայնանիչ:
- Խորթ - Փայտփոր թռչուն - Ռուս թենիսիստ:
- Ախորժ - Իրլանտայի նախկին անուանումը:
- Աւազան - Կատուագգի գաղան - Իշխանութիւն - Լծորդութիւն:
- Սաստիկ սիրահարած - Պատահելիք:
- Թղթախաղ մը - Յօժար - Ասիական ոստան - Այբուբենէն:
- Խոհանոցի սպասներէն - Իգական օտար անուն - Տաղումի հետք:
- Այբուբենէն - Սամիթ, համեմային տունկ - Ափրիկեան երկիր - Տառի մը անունը:
- Թաղման կարգ - Նմանաձայն գիրեր - Ամբողջական հաց - Իշուկ:
- Զուարճախօս - Յարատեւ, շարունակ:
- Փրկագործ - Անձնական գերանուն - Ռուսերէն՝ այո՛:
- Լիբանանեան արաբատառ օրաթերթ - Էական բայ - Ստացական ածական:
- Բորբոսիլ - Իրերայաջորդ տառեր:

ԹԻՒ 187 ԽԱՉԲԱՌԻ ՆՈՒՅՈՒՆ

1	Ֆ	Ե	Լ	Ի	Փ	Է	Մ	Ա	Ս	Ս	Ա								
2	Հ	Ի	Լ	Ի	Ս	Ջ	Ա	Հ	Ե	Ր	Թ								
3	Ա	Լ	Ա	Ջ	Ա	Ն	Մ	Ա	Ր	Ա	Լ								
4	Մ	Ա	Ր	Ա															
5	Պ	Ա	Ր	Ա	Ս	Ա													
6	Ա	Կ		Կ	Ե	Ն	Տ												
7	Ա	Ն	Ի	Լ	Ի	Ի	Վ												
8	Ս	Ա	Ր	Ֆ	Ա	Ն	Տ												
9																			
10																			
11	Ռ																		
12	Ո	Ք																	
13	Ն	Ա	Ջ	Ա	Ր														
14	Ա	Մ	Ա	Ն	Ո	Ս	Ա	Մ	Ի	Մ	Ս								
15	Ո	Յ																	
16	Ո	Ս	Տ																
17	Կ	Ն	Ի	Տ	Ա	Լ	Տ	Ս	Փ	Ա	Ր								
18	Ի	Մ	Ա	Ն	Ա	Լ	Շ	Ա	Ե	Ե									
19	Մ	Ա	Ր	Ի	Ր														
20	Կ	Հ	Օ	Ր	Ի	Շ	Ի	Կ	Ն	Ի	Լ								





Studio Sunset



Studio Sunset



Studio Sunset

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԴՊՐՈՑԻ ԽՈՒՄԲԵՐ



Studio Sunset

